

**Հաշմանդամություն ունեցող երեխաների  
վերաբերյալ տվյալների առկայության,  
անհրաժեշտ տվյալների բացի և  
միջոլորտային տեղեկատվության  
փոխանակման վերլուծություն**

**Հաշմանդամություն ունեցող երեխաների վերաբերյալ հանրայնորեն հասանելի  
տվյալների արագ գնահատման հաշվետվություն**

**ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանի գրասենյակի ֆինանսավորմամբ իրականացվող  
Հաշմանդամության գնահատման գործիքների ու մեթոդաբանության  
ներդաշնակեցում և հաշմանդամություն ունեցող երեխաների մասին  
միջոլորտային տեղեկատվության փոխանակման և տվյալների կառավարման  
համակարգի ձևավորում ծրագիր**

**Հունվար 2018**

**Երևան**

## Բովանդակություն

|                                                                                                                                                |    |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| Աղյուսակների ցանկ.....                                                                                                                         | 2  |
| Գծապատկերների ցանկ .....                                                                                                                       | 3  |
| Հապավումների ցանկ .....                                                                                                                        | 4  |
| Ներածություն .....                                                                                                                             | 5  |
| 1. Խնդրի ձևակերպում.....                                                                                                                       | 9  |
| 2. Հաշմանդամություն ունեցող երեխաների մասին առկա պաշտոնական վիճակագրությունը.....                                                              | 15 |
| 2.1. Հաշմանդամություն ունեցող երեխաների վերաբերյալ պաշտոնական վիճակագրությունն առողջապահության ոլորտում .....                                  | 17 |
| 2.2. Հաշմանդամություն ունեցող երեխաների մասին պաշտոնական վիճակագրությունը կրթության ոլորտում .....                                             | 23 |
| 2.3. Հաշմանդամություն ունեցող երեխաների մասին պաշտոնական վիճակագրությունը սոցիալական պաշտպանության ոլորտում .....                              | 31 |
| 3. Երեխաների հաշմանդամության կարգավիճակի վերաբերյալ տվյալների ներկայացման սահմանափակումները.....                                               | 37 |
| 4. Հաշմանդամության սահմանման նոր ընթացակարգին աջակցելու նպատակով ՀՀ ԿԳՆ և ՀՀ ԱՍՀՆ միջև տվյալների փոխանակման համար պահանջվող մեխանիզմները ..... | 41 |
| 5. Առաջարկություններ .....                                                                                                                     | 46 |
| Օգտագործված գրականության ցանկ .....                                                                                                            | 51 |

## Աղյուսակների ցանկ

|                                                                                                                                             |    |
|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| Աղյուսակ 1. Հաշմանդամություն ունեցող անձանց թվաքանակն ըստ մարզերի ու սեռի, 2016 թ. ....                                                     | 16 |
| Աղյուսակ 2. Հիվանդություններից հաշմանդամ դարձած երեխաների թվաքանակն ըստ սեռի, 2016 թ. ....                                                  | 21 |
| Աղյուսակ 3. ԿԱՊԿ ունեցող երեխաների թվաքանակն ըստ մարզերի ու սեռի, 2017 թ. ....                                                              | 26 |
| Աղյուսակ 4. Հատուկ դպրոցների թիվն ըստ մարզերի 2012-2016 թթ. ....                                                                            | 28 |
| Աղյուսակ 5. Հատուկ դպրոցներում աշակերտների թվաքանակն ըստ մարզերի 2012-2016 թթ. ....                                                         | 28 |
| Աղյուսակ 6. Հատուկ հանրակրթական դպրոցների աշակերտների թվաքանակն ըստ ուղղվածության, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2016/2017 ուս. տարի ..... | 30 |
| Աղյուսակ 7. Հաշմանդամության նպաստ ստացող հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը 2016 թ. ....                                               | 32 |
| Աղյուսակ 8. Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների երեխաների թվաքանակն ըստ տարիքային խմբերի, 2016թ. ....              | 33 |
| Աղյուսակ 9. Վերականգնողական օգնություն ստացած հաշմանդամների թվաքանակն ըստ վերականգնողական գործունեության տեսակի, 2016թ. տարեվերջ.....       | 34 |
| Աղյուսակ 10. 2016 թ. բժշկասոցիալական փորձաքննության արդյունքները .....                                                                      | 37 |
| Աղյուսակ 11. Հաշմանդամ ճանաչված երեխաների թվաքանակն ըստ հիվանդությունների և ըստ սեռի, 2016թ. ....                                           | 37 |

## Գծապատկերների ցանկ

|                                                                                                                                                     |    |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| Գծապատկեր 1. Հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը, 2012-2016 թթ. ....                                                                            | 17 |
| Գծապատկեր 2. 2016 թ.-ին հիվանդությունների պատճառով հաշմանդամություն ձեռք բերած երեխաների թիվը .....                                                 | 20 |
| Գծապատկեր 3. 2016 թ.-ին հիվանդությունների պատճառով հաշմանդամություն ձեռք բերած երեխաների թիվն ըստ տարիքի ու սեռի .....                              | 21 |
| Գծապատկեր 4. 2016 թ.-ին հիվանդությունների պատճառով հաշմանդամություն ձեռք բերած երեխաների տարիքային բաշխվածությունը տոկոսներով .....                 | 21 |
| Գծապատկեր 5. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (ԿԱՊԿ) կամ հաշմանդամություն ունեցող երեխաների մասին տեղեկատվության հոսքի ցուցադրություն ..... | 26 |
| Գծապատկեր 6. Հատուկ դպրոցներում աշակերտների թվաքանակը, 2012-2016թթ.-ին ....                                                                         | 29 |
| Գծապատկեր 7. Հաշմանդամություն ունեցող երեխաների թվաքանակի դինամիկան մանկատներում .....                                                              | 34 |
| Գծապատկեր 8. Հաշմանդամություն ունեցող երեխաների բաշխումն ըստ բնակվելու վայրի .....                                                                  | 42 |

## Հապավումների ցանկ

|          |                                                                         |
|----------|-------------------------------------------------------------------------|
| ՀՈՒԵ     | Հաշմանդամություն ունեցող երեխա/երեխաներ                                 |
| ՀՄԴ      | Հիվանդությունների միջազգային դասակարգում                                |
| ՖՄԴ      | Ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգում |
| ՎԱԾ      | Վերականգնողական անհատական ծրագիր                                        |
| ՄնԳ      | Մշտադիտարկում և գնահատում                                               |
| ԿԳՆ      | Կրթության և գիտության նախարարություն                                    |
| ԱՆ       | Առողջապահության նախարարություն                                          |
| ԱՍՀՆ     | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն                           |
| ԲՄՓԳ     | Բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն                          |
| ԲՄՓՀ     | Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողով                                |
| ԱԺ       | Ազգային ժողով                                                           |
| ԿՏԱԿ     | Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն                                  |
| ՀՀ ԱՎԾ   | Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն              |
| ՀՄՀԿ     | Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն                              |
| ՀՈՒԱ     | Հաշմանդամություն ունեցող անձ/անձինք                                     |
| ՄՀԱՏԿ    | Մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոն                    |
| ՀՀ       | Հայաստանի Հանրապետություն                                               |
| ԿԱՊԿ     | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք                                |
| ԱՀԿ      | Առողջապահության համաշխարհային կազմակերպություն                          |
| ՅՈՒՆԻՍԵՖ | ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ                                                |

# Ներածություն

## Նախապատմություն

Հաշմանդամություն ունեցող երեխաների վերաբերյալ տվյալների առկայության, անհրաժեշտ տվյալների բացի և միջոլորտային տեղեկատվության փոխանակման վերլուծության մասին հաշվետվությունը պատրաստել է [ESI Consulting Group-ը](#)՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից ֆինանսավորվող «Հաշմանդամության գնահատման գործիքների ու մեթոդաբանության ներդաշնակեցում և հաշմանդամություն ունեցող երեխաների մասին միջոլորտային տեղեկատվության փոխանակման և տվյալների կառավարման համակարգի ձևավորում» ծրագրի շրջանակում: Ծրագիրը կոչված է նպաստելու ՄԱԿ-ի ՀՈՒԱԻԳ (Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների գործընկերություն) «Հաշմանդամություն ունեցող անձանց ծառայությունների մատչելիության բարելավում ու մասնակցության խթանում» ծրագրի երկրորդ փուլի իրականացմանը՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի և ԱՀԿ ՖՄԴ մոտեցումներին համահունչ:

ԱՇԽԱՐՀԻ ԵՐԵՄԱՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ 2013-ԻՆ:  
Հաշմանդամություն ունեցող երեխաներ

Հասարակությունը չի կարող արդար լինել, քանի դեռ բոլոր երեխաները ներառված չեն, իսկ հաշմանդամություն ունեցող երեխաները չեն կարող ներառվել, քանի դեռ նրանց մասին հավաքագրվող և վերլուծվող որակյալ տվյալները նրանց տեսանելի չեն դարձնում:

կատարել ախտորոշման վրա հիմնված հաշմանդամության սահմանման մոտեցումից՝ հաշմանդամություն ունեցող անձանց առավել համապարփակ գնահատման մոտեցման, որը հնարավորություն կընձեռի բարձրացնել որոշումների կայացման թափանցիկությունը, բարելավել ծառայություններ մատուցողների, այդ թվում և պետական ու ոչ պետական կառույցների միջև տեղեկատվության ու տվյալների փոխանակման արդյունավետությունը և վերահսկել ռեսուրսների արդար ու կարիքների վրա հիմնված բաշխումը:

Հաշմանդամության սահմանման բնագավառում իրականացվող բարեփոխումներին զուգահեռ, ՀՀ կառավարությունը նախաձեռնել է երեխաների խնամքի ու պաշտպանության համակարգի հիմնարար բարեփոխումներ՝ շուրջօրյա խնամքի հաստատություններից անցում կատարելով ընտանեկան կամ համայնքահենք խնամքի ծառայությունների մատուցմանը՝ նախատեսելով մինչև

2025 թվականը վերակազմավորել բոլոր շուրջօրյա խնամքի հաստատությունները և հատուկ դպրոցները և ապահովել համընդհանուր ներառական կրթություն: Նախկին խորհրդային շրջանի հատուկ դպրոցները ՀՀ կառավարությունն աստիճանաբար վերակազմավորում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ու հաշմանդամություն ունեցող երեխաների մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների: Այդ կենտրոնները նախատեսված են աջակցելու դպրոցներին՝ առավել մասնագիտացված ծառայություն մատուցելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին և ապահովելու նրանց լիարժեք ներառումը հանրակրթական դպրոցներում: Երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը նույնպես գնահատվում և սահմանվում է ԱՀԿ ՖՄԴ սկզբունքների հիման վրա:

Հավակնոտ այս բարեփոխումները պահանջում են լավ ծրագրված և ներդաշնակեցված տվյալների ու տեղեկատվության փոխանակում բոլոր շահագրգիռ կողմերի միջև, որոնք հաշմանդամություն ունեցող երեխաների համար ծառայությունները ծրագրելիս, մշակելիս և մատուցելիս նրանց առաջընթացը գրանցելիս, առկա թերություններն ու մարտահրավերները դիտարկելիս և միմյանց փոխանցելիս կկիրառեն մեկ միասնական լեզու:

### ***Ուսումնասիրության նպատակը և մեթոդաբանությունը***

Ուսումնասիրության նպատակը երկակի է. մի կողմից, այն ներկայացնում է հաշմանդամություն ունեցող երեխաների վերաբերյալ վարչական ու հրապարակային բաց աղբյուրներից հասանելի տվյալների ու տեղեկատվության մասին ամփոփ պատկերը և տալիս է առաջարկություններ տվյալների ներկայացման պրակտիկայի բարելավման համար, իսկ մյուս կողմից այն դիտարկում է թիրախային երեք նախարարությունների՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ), Կրթության և գիտության նախարարության (ԿԳՆ) և Առողջապահության նախարարության (ԱՆ) միջև տվյալների փոխանակման մոտեցումները և առաջարկում տվյալների փոխանակման ու փոխանցման նոր տարբերակներ, որով հնարավոր կլինի հեշտությամբ հետևելու հաշմանդամություն ունեցող երեխաների հաշվառված կարիքները և այդ կարիքներին համապատասխան ծառայությունների մատուցումը:

**Խորհրդատուներն օգտագործել են** ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) հրապարակած տվյալները, ինչպես նաև թիրախային հիմնական նախարարությունների տարեկան հաշվետվությունները, վարչական տվյալներն ու կայքէջերի տեղեկությունները: Երկրորդական տվյալները ստացվել են հանրայնորեն մատչելի աղբյուրներից, ինչպիսիք են օրենսդրական շրջանակները և հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների պաշտպանությամբ ու

ծառայությունների մատուցմամբ զբաղվող տարբեր տեղական ու միջազգային կազմակերպությունների կողմից պատրաստված համապատասխան զեկույցները: Տվյալ ուսումնասիրությունը կատարվել է 2017 թ. դեկտեմբերի վերջին, և օգտագործվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, Առողջապահության, Կրթության և գիտության նախարարությունների և ՀՀ ԱՎԾ 2016-2017 թթ. տարեկան զեկույցները: Հանրայնորեն մատչելի տեղեկատվության փաստաթղթային վերլուծության մեջ ընդգրկված են նաև ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստանի, «Մեյվ դը չիլդրեն» (Save the Children) կազմակերպության Հայաստանի ներկայացուցչության, Human Rights Watch-ի և այլ կազմակերպությունների կողմից պատրաստած հաշվետվությունները:

**Հետազոտությունը հնարավորություն է տվել վերհանել առանցքային այն ոլորտները,** որտեղ անհրաժեշտ են անմիջական միջամտություն ու գործողություններ՝ լրացնելու անհրաժեշտ տեղեկատվության բացը, ինչպես նաև հիմքեր ստեղծել հաշմանդամություն ունեցող երեխաների մասին տվյալների ու տեղեկատվության փոխանակումը հետազայում բարելավելու համար:

Բացահայտված առանցքային հարցերն են.

- ՀՀ ԱՍՀՆ-ի և ՀՀ ԿԳՆ-ի համապատասխան գերատեսչությունների կողմից երեխաների գնահատման և անհատական կարիքների վերհանման ժամանակ միատեսակ մոտեցման և ընդհանուր լեզվի կիրառում,
- ՏՏ լուծումներ առանցքային նախարարությունների միջև ժամանակին ու արդիական տեղեկատվության փոխանակման համար և ստացված տեղեկատվությանն արձագանքելու մեխանիզմներ,
- Մոնիթորինգի ու գնահատման (ՄնԳ) գործիքներ և տվյալների ներկայացման ձևաչափեր՝ հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքների ու մատուցվող ծառայությունների մասին ներքին և հանրային տեղեկատվության փոխանակման համար՝ բաղդատված ըստ տարիքի, սեռի, հաշմանդամության տեսակի ու բնակության վայրի:

**Տեղեկատվության առկայության և անհրաժեշտ տեղեկատվության բացակայության մասին այս արագ գնահատման արդյունքները ծրագրի թիմը կօգտագործի** առանցքային նախարարություններին տրվող խորհրդատվական աջակցությունը հստակեցնելու նպատակով, ակտիվ կապ ու երկխոսություն ապահովելով նրանց հետ՝ հաշմանդամություն ունեցող երեխաների մասին տվյալների մատչելիության և միջգերատեսչական տվյալների փոխանակման և սոցիալական, առողջապահական ու կրթական համակարգերի ներսում և դրանց միջև տեղեկատվության փոխանակման մեխանիզմների հստակեցման և տեղեկատվության ներդաշնակեցման մասով ծրագրի նպատակներին հասնելու համար:

### ***Հաշվետվության կառուցվածքը***

Սույն հաշվետվությունը հակիրճ ներկայացնում է խնդիրը և նկարագրում է հաշմանդամություն ունեցող երեխաների վերաբերյալ տվյալների ստացման ու մատչելիության առումով առկա վիճակը, ապա վերլուծում և քննարկում է առողջապահության, կրթության և սոցիալական հարցերի նախարարությունների բաց աղբյուրներում հրապարակված պաշտոնական վիճակագրությունը, տրամադրում է երեխաների բժշկական սոցիալական փորձաքննության մասին տվյալներն ու առկա տեղեկատվության թերությունները և առաջարկում է ՀՀ ԱՍՀՆ և ՀՀ ԿԳՆ միջև տվյալների պատշաճ փոխանակման նպատակով անհրաժեշտ մեխանիզմներ՝ ծրագրի աշխատանքները հստակ պլանավորելու համար:

## 1. Խնդրի ձևակերպում

Հաշմանդամություն ունեցող երեխաների համար ծառայությունների առկայությունը, մատչելիությունը և հասանելիությունը Հայաստանում ամենաշատ քննարկվող հարցերից են և գտնվում են ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստանի շարունակական ուշադրության ներքո: Յուրաքանչյուր ծրագրի շրջանակներում կամ առանձին հետազոտությունների ու ուսումնասիրությունների միջոցով ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստանը տեղեկություններ ու տվյալներ է հավաքագրում՝ չափելու և/կամ գնահատելու համար երկրի առաջընթացը ծառայությունների ծավալի, ծածկույթի և օգտագործման վերաբերյալ, ինչպես նաև իրենց անհրաժեշտ ծառայությունների մասին հաշմանդամություն ունեցող երեխաներով ընտանիքների իրազեկվածության առումով:

ՍԵՆՏՐԱԼ ԵՐԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԸ 2013-ԻՆ: Հաշմանդամություն ունեցող երեխաներ

Գլոբալ ու ազգային ջանքերի վերջնական ապացույցը կլինի տեղում ստուգելը տեսնելու համար, թե արդյո՞ք հաշմանդամություն ունեցող յուրաքանչյուր երեխա օգտվում է իր իրավունքներից, այդ թվում և ծառայությունների, աջակցության ու հնարավորությունների մատչելիությունից մյուս երեխաներին գուցա հեռ՝ նույնիսկ ամենահեռավոր վայրերում և ամենաչքավոր պայմաններում:

Հայաստանում առկա է հետազոտական և վերլուծական աշխատանքների հսկայական հավաքածու, որտեղ ուսումնասիրվում ու գնահատվում է հաշմանդամություն ունեցող անձանց (ՀՈԻԱ), այդ թվում երեխաների համար սոցիալական ծառայությունների մատչելիությունը: Այդ հետազոտություններն

իրականացվել են Հայաստանում գործող տեղական ու միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից այդ թվում Human Rights Watch-ի, «Սեյվ դը չիլդրեն»-ի, Վորլդ Վիժընը, Հայ օգնության հիմնադրամի, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի և այլն կողմից:

Երեխաներին, այդ թվում հաշմանդամություն ունեցող երեխաներին մատուցվող ծառայությունների համակարգումը, ինչպես նաև երեխաների խնամքի ու պաշտպանության ոլորտում ՀՀ կառավարության ռազմավարական ծրագրերի մշտադիտարկումը և դրանց մասին տեղեկատվության հավաքագրումը կազմակերպվում են հիմնականում երեք առանցքային նախարարությունների կողմից՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ՀՀ ԱՍՀՆ), Առողջապահության նախարարության (ՀՀ ԱՆ) ու Կրթության և գիտության նախարարության (ՀՀ ԿԳՆ) կողմից:

ՀՀ [ԱՍՀՆ](#)-ն կարգավորում ու իրականացնում է հաշմանդամության գնահատումն ու սահմանումը, ներառյալ երեխաների մոտ, հավաքագրում և պահպանում է

հաշմանդամություն ունեցող երեխաների և բժշկակասոցիալական փորձաքննության հիման վրա նրանց համար երաշխավորած և վերականգնողական անհատական ծրագրերի միջոցով նրանց մատուցվող ծառայությունների մասին տվյալները, որոնք ներառում են հաշմանդամության նպաստն ու հաշմանդամություն ունեցող երեխաներին անվճար տրամադրվող օժանդակ սարքերն ու պրոթեզները, օրթեզները, համակարգում է Երեխաների խնամքի ու պաշտպանության պետական ռազմավարության և նրա իրականացման միջոցառումների ծրագրի մշակումը, իրագործումն ու գնահատումը, հավաքագրում ու կառավարում է երեխաների խնամքի ու հոգածության հաստատություններում, մանկատներում, ցերեկային խնամքի կենտրոններում ծառայություն ստացող երեխաների մասին տվյալները, վարում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և որդեգրված երեխաների վերաբերյալ «Մանուկ» տեղեկատվական համակարգը, և վերահսկում է այլընտրանքային խնամքի բարեփոխումների բոլոր ոլորտները՝ ազգային հանձնաժողովի գործունեությունը, օրենսդրական շրջանակի և պետական ռազմավարության մշակումն ու իրագործումը, սոցիալական աշխատողների վերապատրաստումները և սոցիալական ծառայություններ մատուցողների հավատարմագրումը:

ՀՀ **ԿԳՆ**-ն կանոնակարգում է բոլոր, այդ թվում հաշմանդամություն ունեցող երեխաների կրթությունը, վերահսկում է հատուկ դպրոցների և Հանրապետական ու տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների գործունեությունը, մշակում ու խթանում է ներառական կրթության քաղաքականությունը, դրա իրականացումն ու մշտադիտարկումը, կարգավորում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն ու ծառայությունների մատուցումը, համակարգում է հատուկ դպրոցների վերակազմավորումը և վերահսկում է երեխաների դուրսբերումը հաստատություններից, վարում է սովորողների, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողների մասին տեղեկատվական համակարգը:

ՀՀ **ԱՆ**-ն կարգավորում է երեխաների ու դեռահասների առողջությունը, խթանում է վաղ նորածինային սկրինինգը՝ երեխաների մոտ հաշմանդամությունը հայտնաբերելու և արձագանքնելու համար, անվճար բժշկական ու վերականգնողական ծառայություններ է մատուցում հաշմանդամություն ունեցող 0-7 տարեկան երեխաներին և անապահով ընտանիքների երեխաներին, որոնք ընդգրկված են ընտանեկան նպաստների համակարգում, ծանր հաշմանդամություն ունեցող երեխաների համար վերականգնողական համայնքային կենտրոններ է հիմնում՝ ներառյալ կրթական միջավայրերում, խթանում է հանրային իրազեկումը կանխելու երեխաների շրջանում թերսնուցումը:

2015 թ.-ից ՀՀ ԱՍՀՆ-ն նախաձեռնել է պետական ֆինանսավորմամբ երեխաներին մատուցվող սոցիալական ծառայությունների վերահսկման, մշտադիտարկման և գնահատման (ՄնԳ) նոր համակարգի<sup>1</sup> ձևավորումը: Ի լրումն վարչական տվյալների, ինչպես 2016 թ.-ին, այնպես էլ 2017թ-ին, ՀՀ ԱՍՀՆ-ը կազմակերպել է երեխաների խնամքի հաստատություններում ու խնամատար ընտանիքներում տարբեր հետազոտություններ, դիտարկումներ և հարցազրույցներ՝ ծառայությունների որակը և մատուցվող ծառայություններից շահառուների գոհունակությունը գնահատելու համար<sup>2</sup>:

Համապատասխան առողջապահական ու կրթական կառույցներից ՀՀ ԱՆ-ն ու ՀՀ ԿԳՆ-ն պարբերաբար հավաքագրում են վարչական տվյալներ: ՀՀ ԱՆ-ի կողմից հավաքագրվող տեղեկատվությունը ներառում է տվյալներ նորածնային սկրինինգի ու կանխարգելման նախաձեռնությունների, ինչպես նաև երեխաների հիվանդությունների ու բուժումների արձանագրությունների մասին:

ՀՀ ԿԳՆ-ն դպրոցներից ու մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններից տվյալներ է ստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ու հաշմանդամություն ունեցող երեխաների մասին, որոնք ծառայություններ են ստանում հանրակրթական ու հատուկ դպրոցներում: Այդուհանդերձ, ո՛չ վարչական տվյալները, ո՛չ մեր կողմից նախաձեռնած տեղեկատվության որոնման նարդյունքները դուրս չեն բերում ծառայությունների, հատկապես հաշմանդամություն ունեցող երեխաներին անհրաժեշտ և մատուցվող ծառայությունների պահանջարկի ու մատչելիության իրական անհամապատասխանության հստակ պատկերը:

Հայաստանի պետական քաղաքականությունը<sup>3</sup>, հավատարիմ լինելով ՀՀ Սահմանադրությամբ (Հոդված 14.1), ՄԱԿ-ի կոնվենցիաների (Հաշմանդամություն

<sup>1</sup> ՀՀ ԱՍՀՆ-ի կողմից տրամադրվող պետական ֆինանսավորմամբ սոցիալական ծառայությունների ցանկը ներկայացված է 2.3 բաժնում:

<sup>2</sup> ՀՀ ԱՍՀՆ-ի ՄնԳ գործունեությունը ֆինանսավորվում է Համաշխարհային բանկի Սոցիալական պաշտպանության կառավարման (SPAPII) երկրորդ ծրագրի կողմից, որի համապատասխան հաշվետվությունները գետեղված են ՀՀ ԱՍՀՆ կայքէջում՝ սահմանափակ, միայն ներքին գործածության համար: Սակայն որոշ հաշվետվություններ մատչելի են նաև ավելի մեծ լսարանի համար:

<sup>3</sup> Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքը (1996 թ.), Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին ՀՀ օրենքը (2002 թ.), Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին ՀՀ օրենքը (1993 թ.), ՀՀ օրենքը պետական կենսաթոշակների մասին (2010 թ.), ՀՀ օրենքը պետական նպաստների մասին (2015 թ.), ՀՀ օրենքը սոցիալական աջակցության մասին (2014 թ.), Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը, Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը, Հանրակրթության մասին օրենքը (2014 թ.), Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը (2017 թ.) և այլն:

ունեցող անձանց իրավունքների մասին և Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիաների), Եվրոպայի Խորհրդի վերանայված սոցիալական խարտիայի (2004 թ.) վավերացմամբ ստանձնած իր ներքին ու միջազգային պարտավորություններին, նախատեսում է հաշմանդամություն ունեցող անձանց, ներառյալ երեխաների համար հետևյալ ծառայությունները.

1. **Հաշմանդամության գնահատման և իրավասության սահմանման բժշկասոցիալական փորձաքննություն.** առողջապահական հիմնարկներից ուղեգրով անձը/երեխան պետք է անձնապես բժշկասոցիալական փորձաքննություն անցնի բժշկասոցիալական փորձաքննության մարզային կամ մասնագիտացված հանձնաժողովում (ԲՄՓՀ), որտեղ, համապատասխան չափանիշներին փորձաքննության արդյունքների համապատասխանության դեպքում, տրամադրվում է հաշմանդամության խումբ կամ «հաշմանդամություն ունեցող երեխա» կարգավիճակ:
2. **Հաշմանդամության նպաստ** է նշանակվում բոլոր նրանց, ովքեր ստանում են «հաշմանդամություն ունեցող երեխա» կարգավիճակը: Հաշմանդամության նպաստի չափն սահմանվում է օրենքով և կապ չունի ո՛չ հաշմանդամության ծանրության և ո՛չ անհրաժեշտ ծառայությունների հետ: Այն կապ չունի նաև սոցիալական կենսապահովման նվազագույն շեմի հետ: Հայաստանի կառավարությունը (ՀԿ) ամեն տարի հաստատում է նպաստի գումարի չափը:
3. **Ընտանեկան նպաստ,** եթե ընտանիքն անապահով է. ընտանիքում հաշմանդամություն ունեցող երեխայի առկայությունը մեծացնում է այդ ընտանիքի անապահովության միավորը և նպաստառու լինելու հավանականությունը:
4. **Վերականգնողական պարագաները, պրոթեզներն ու օրթեզները տրամադրվում են անվճար:** Դրանց մեջ են մտնում լսողական սարքերը, ձայնաստեղծ սարքը, աչքի պրոթեզները, սայլակները, քայլակները, կորսետները և այլն:
5. **Առողջապահական անվճար ծառայություններ** (ամբուլատոր և ստացիոնար խնամք) և **վերականգնում** մինչև յոթ տարեկան երեխաների և յոթ տարեկանից բարձր ընտանիքների անապահովության սահմանման համակարգում ներառված երեխաների համար, որոնք ընտանեկան նպաստների համակարգի շահառու ընտանիքներից են, ինչպես նաև մանկատների և պետական ֆինանսավորմամբ գիշերային խնամքի հաստատություններում գտնվող երեխաների համար:
6. Ներառական կրթության շրջանակում **անվճար ուսուցում և աջակցություն** հանրակրթական դպրոցներում և մասնագիտական կրթության հաստատություններում:
7. **Տեսողական խանգարումներ ունեցող երեխաների համար Բրայլյան գրքերի ու դասագրքերի տպագրություն:**

8. Հաշմանդամություն ունեցող երեխայի խնամքի տարիները, բայց ոչ ավելի, քան 10 տարին, խնամակալի կենսաթոշակի անցնելիս համարվում են աշխատանքային ստաժ:
9. **Ցերեկային խնամքի և վերականգնողական ծառայություններ** զանազան ՀԿ-ների ու պետական ֆինանսավորմամբ գործող կենտրոնների կողմից իրականացվող պետական գործընկերության ծրագրերի միջոցով:
10. **Անվճար խնամք գիշերային խնամքի հաստատություններում**, հատուկ դպրոցներում և մանկատներում:
11. **Միջքաղաքային տրանսպորտից օգտվելիս որոշակի արտոնություններ և հանրային տրանսպորտից անվճար օգտվելու հնարավորություն**, սակայն՝ միայն էլեկտրական տրանսպորտային միջոցներից, որոնք Երևանից դուրս գոյություն չունեն:

ԲՄՓՀ- կողմից անձին երաշխավորված ծառայությունները նշվում են անձի վերկանգնողական անհատական ծրագրում (ՎԱԾ) անմիջապես երեխայի հաշմանդամության կարգավիճակը սահմանելուց հետո: Սակայն ՎԱԾ-ով երաշխավորված ծառայությունների մատուցման և ստացված ծառայությունների որակի վերահսկման մեխանիզմ գոյություն չունի: Երաշխավորված ծառայությունների մատուցման և ստացված ծառայությունների որակի վերահսկման մեխանիզմներ ստեղծելու ՀՀ ԱՍՀՆ բազմաթիվ փորձերն ահնաջողության են մատնվել՝ հիմնականում ՀՀ ԱՍՀՆ-ի և ծառայություններ մատուցողների միջև տեղեկատվության փոխանակման համար համապատասխան տեղեկատվական համակարգի բացակայության պատճառով:

Վերոնշյալ նախարարություններից յուրաքանչյուրն ունի իր վարչական տեղեկատվական համակարգը, սակայն այդ համակարգերում հավաքագրված տեղեկատվության համար չկա սահմանված միատեսակ ձևաչափ և նրանց միջև տեղեկատվության փոխանակման մեխանիզմները հստակեցված չեն<sup>4</sup>, բացարձակապես գոյություն չունի վիճակագրական վկայություն այն մասին, թե «հաշմանդամ երեխա» կարգավիճակով քանի երեխա է հաճախում դպրոց կամ մանկապարտեզ, կամ նրանցից քանիսն ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, քանիսն են տնային կամ հիվանդանոցային խնամք ստանում կամ գտնվում հատուկ դպրոցներում<sup>5</sup>: Եվ ամենակարևորը՝ չկա տեղեկատվություն

<sup>4</sup> Նախարարությունների միջև նման կանոնակարգում չկա, սակայն բոլոր նախարարությունները վարչական վիճակագրական տեղեկություններ են հաղորդում ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությանը:

<sup>5</sup> Գոյություն ունեն շուրջօրյա հաստատություններում խնամք ստացող երեխաների մասին տվյալներ՝ դասակարգված ըստ հաշմանդամության կարգավիճակի, սակայն հաշմանդամություն ունեցող երեխաների ստացած խնամքի ու աջակցության բաշխվածության մասին վիճակագրական ամփոփում չկա:

այն հիմնական արգելքների մասին, որոնք խոչընդոտում են այդ երեխաների առօրյա սոցիալական կյանքը:

2013թ.-ից Հայաստանի կառավարությունը նախաձեռնել է բարեփոխումներ հաշմանդամության գնահատման, իրավասության սահմանման և ծառայությունների մատուցման բնագավառում, հիմնվելով ԱՀԿ Ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգման (ՖՄԴ) վրա, նպատակ հետապնդելով անցում կատարել ախտորոշման վրա հիմնված հաշմանդամության սահմանման մոտեցումից՝ հաշմանդամություն ունեցող անձանց առավել համապարփակ գնահատման մոտեցման, որը հնարավորություն կընձեռի բարձրացնել որոշումների կայացման գործընթացի թափանցիկությունը, բարելավել ծառայություններ մատուցողների, այդ թվում և պետական ու ոչ պետական կառույցների միջև սահմանված տեղեկատվության ու տվյալների փոխանակման արդյունավետությունը և վերահսկել ռեսուրսների արդար ու կարիքների վրա հիմնված բաշխումը: 2014 թ. սկզբներին Հայաստանի կառավարությունը հաստատել է «ԱՀԿ ՖՄԴ հիման վրա Հաշմանդամության գնահատման անձի բազմակողմանի գնահատման փորձնական ծրագիրը և մեթոդաբանությունը» (ՀՀ Կառավարության 2014 թ. հունվարի 9 -ի թիվ 1 Արձանագրային որոշումը):

Ակնկալվում է, որ հաշմանդամության սահմանման նոր ընթակարգի շրջանակում առնվազն երեք նախարարություններ՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (ԱՍՀՆ), Առողջապահության նախարարությունը (ԱՆ) և Կրթության և գիտության նախարարությունը (ԿԳՆ) միմյանց հետ կփոխանակեն հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում երեխաների մասին ամբողջ տեղեկատվությունը՝ կիրառելով ԱՀԿ ՖՄԴ կոդերն ու որակիչները: 2014-2017 թթ. ընթացքում ՀՀ ԱՍՀՆ-ն իրականացրել է փորձնական ծրագրի մի քանի փուլեր, փորձարկելու տեղեկատվության ստացման նոր գործիքները և տեղեկատվության փոխանակման և տվյալների կիրառման նոր ընթացակարգերը:

2016 թ.-ից սկսած ԱՆ-ը գործարկում է Էլ-առողջապահության համակարգը, որը թույլ է տալիս շահառուներին հայտնաբերել նրանց նույնականացման քարտի համարով և համադրել անձին վերաբերող անհրաժեշտ տեղեկատվությունը: Սակայն հետագա զարգացումները պետք է ներառեն նոր մոդուլի հիմնում, ինչը հնարավորություն կտա ապահովել տեղեկատվության փոխանակում Էլ-առողջապահություն համակարգի և Էլ-հաշմանդամություն համակարգի միջև, որը դեռևս գտնվում է մշակման փուլում, և հնարավորություն կտա հիվանդությունների դասակարգման ծածկագրերը/կոդերը (հիվանդությունների միջազգային դասակարգում՝ ՀՄԴ) վերածել ԱՀԿ ՖՄԴ ծածկագրերի՝ օրգանիզմի ֆունկցիաների ու մարմնի կառուցվածքի բաժիններում:

Բարեփոխման ամենադժվար բաղադրիչը հաշմանդամություն ունեցող երեխաների գործունեության ու մասնակցության մասին, այդ թվում և նրանց մատուցված ծառայությունների մասին տեղեկատվության հավաքագրումն ու ներդաշնակեցումն է: Հատուկ ուշադրություն ու լուծումներ են պահանջում սոցիալական պաշտպանության ու կրթական ոլորտի միջև տեղեկատվության փոխանակման հարցերը:

## 2. Հաշմանդամություն ունեցող երեխաների մասին առկա պաշտոնական վիճակագրությունը

Հաշմանդամություն ունեցող երեխաների մասին պաշտոնական տվյալների հիմնական աղբյուրը [ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության](#) (ՀՀ ԱՎԾ) պարբերական հրապարակումներն են՝ «Հայաստանի սոցիալական վիճակը», «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», ինչպես նաև Առողջապահության նախարարության «Առողջության և առողջապահության վիճակագրական տարեգիրքը»: ՀՀ ԱՎԾ-ը ներկայումս մշակում է Կայուն զարգացման նպատակների համար տվյալների հավաքագրման համակարգ, որը դեռևս անավարտ է: ՀՀ ԱՎԾ-ի հրապարակած տվյալները հավաքագրվում են անմիջապես<sup>6</sup> կրթական հաստատություններից, առողջապահական հիմնարկներից, խնամք իրականացնող հաստատություններից, ինչպես նաև ստացվում են Պետական առողջապահական գործակալությունից, Բժշկասոցիալական փորձաքննության պետական գործակալությունից (ԲՍՓԳ) և ՀՀ ԿԳՆ-ի Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնից (ԿՏԱԿ):

ՀՀ ԱՍՀՆ-ն որոշ վիճակագրական տվյալներ է տրամադրում «Փյունիկ» տեղեկատվական համակարգում գրանցված հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ, իսկ իր կայքէջում տեղադրում է իր պարբերական հաշվետվությունները, որտեղ զետեղվում է շատ համառոտ տեղեկատվություն հաշմանդամություն ունեցող անձանց մատուցած հիմնական ծառայությունների մասին: ԲՍՓԳ-ը ևս տրամադրում է տարեկան հաշվետվություններ, սակայն դրանցում հաշմանդամություն ունեցող երեխաների մասին առանձին տվյալներ չկան:

ՀՀ ԿԳՆ-ի կայքէջը վիճակագրական տվյալներ է ներկայացնում հանրակրթական դպրոցներում, ներառյալ հատուկ դպրոցներում սովորողների մասին, սակայն

---

<sup>6</sup> ՀՀ օրենքը պետական վիճակագրության մասին, 2000 թ. ապրիլի 4:

կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (ԿԱՊԿ) և հաշմանդամություն ունեցող երեխաների որևէ դասակարգում չի տրամադրվում<sup>7</sup>:

ՀՀ ԱՆ վարչական տվյալները ևս տրամադրվում են ՀՀ ԱՎԾ-ին և հրատարակվում նրանց հրապարակումներում: Առողջապահական վիճակագրությունը տրոհված է ըստ երեխաների, այդ թվում հաշմանդամություն ունեցող երեխաների տարիքի և սեռի:

Ստորև աղյուսակ 1-ում բերված է հաշմանդամություն ունեցող երեխաների մասին ՀՀ ԱՎԾ վարչական վիճակագրությունը, իսկ հաջորդող ենթաբաժինները ներկայացնում են ոլորտային որոշ տվյալներ:


**Աղյուսակ 1. Հաշմանդամություն ունեցող անձանց թվաքանակն ըստ մարզերի ու սեռի, 2016 թ.**

|                 | Հաշմանդամություն ունեցող անձանց ընդհանուր թիվը |                 | Ներառյալ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցողներին |                    |
|-----------------|------------------------------------------------|-----------------|----------------------------------------------------|--------------------|
|                 | Ընդամենը                                       | Ներառյալ կանայք | Ընդամենը                                           | Ներառյալ աղջիկները |
| Երևան           | 61,725                                         | 29,909          | 2,298                                              | 724                |
| Արագածոտն       | 8,929                                          | 4,121           | 383                                                | 117                |
| Արարատ          | 20,873                                         | 10,561          | 902                                                | 263                |
| Արմավիր         | 14,090                                         | 6,167           | 714                                                | 232                |
| Գեղարքունիք     | 18,071                                         | 8,618           | 681                                                | 194                |
| Լոռի            | 21,895                                         | 11,343          | 809                                                | 265                |
| Կոտայք          | 14,868                                         | 6,719           | 723                                                | 241                |
| Շիրակ           | 19,631                                         | 9,871           | 798                                                | 266                |
| Սյունիք         | 11,650                                         | 5,753           | 419                                                | 156                |
| Վայոց ձոր       | 4,766                                          | 2,506           | 122                                                | 34                 |
| Տավուշ          | 8,668                                          | 4,320           | 328                                                | 106                |
| <b>Ընդամենը</b> | <b>205,166</b>                                 | <b>99,888</b>   | <b>8,177</b>                                       | <b>2,598</b>       |

Աղբյուրը. «ՀՀ սոցիալական վիճակը 2016 թ.» ՀՀ ԱՎԾ 2017թ.

[http://www.armstat.am/file/article/soc\\_2016\\_11.pdf](http://www.armstat.am/file/article/soc_2016_11.pdf)


<sup>7</sup> Երեխաները կարող են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունենալ, սակայն՝ ոչ անպայմանորեն հաշմանդամություն, և երեխաները կարող են հաշմանդամություն ունենալ, սակայն ոչ միշտ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ:



**Գծապատկեր 1. Հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը, 2012-2016 թթ.**

## 2.1. Հաշմանդամություն ունեցող երեխաների վերաբերյալ պաշտոնական վիճակագրությունն առողջապահության ոլորտում

Ինչպես վերը նշվեց, պետական քաղաքականությունը<sup>8</sup> նախատեսում է անվճար բժշկական ծառայություններ հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ հաշմանդամության 1-ին, 2-րդ խմբերի և «հաշմանդամ երեխա» կարգավիճակով անձինք կարող են անվճար ստանալ նշանակված դեղամիջոցներ, բժշկական որոշ հետազոտություններ և խորհրդատվություն:



Առողջապահության ոլորտում Հայաստանում գրանցված մեծագույն առաջընթացը դա 2005 թվականից սկսած և ամեն տարի ավելացող ցանկով նորածինների սկրինինգներն են, որոնք ուղղված են երեխաների մոտ հաշմանդամության վաղ հայտնաբերմանը և/կամ կանխարգելմանը<sup>9</sup>: [Զարգացման հապաղումների կամ խանգարումների վաղ հայտնաբերումը նախապայման է երեխաների շրջանում հաշմանդամության հետագա](#)

<sup>8</sup> «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության մասին» օրենք, ՀՀ կառավարություն, Պետական առողջապահական տարեկան ծրագրեր, 2013 թ. -ի դեկտեմբերի 26-ի որոշումը՝ արտոնյալ պայմաններով բնակչությանն անվճար տրամադրվող պետության կողմից երաշխավորված առողջապահական ծառայությունների մասին:

<sup>9</sup> Առողջապահական պետական տարեկան ծրագրեր. Մոր և մանկան առողջության պահպանման բաժիններ:

### խորացմանը վաղ միջամտության և կանխարգելման համար:

Հայաստանում իրականացվում են նորածինների նախածննդյան և հետծննդյան հետևյալ սկրինինգները<sup>10</sup>.

- **Բնածին հիպոթերիոզի.** 4.000 նորածնից մեկը ծնվում է բնածին հիպոթերիոզով, և, եթե այն ժամանակին չբուժվի, կարող է հանգեցնել մտավոր թուլամտության: Նվիրատուների հովանավորությամբ 2005 թ. սկսվել է սկրինինգի ու կանխարգելման ծրագիրը, որն այժմ իրականացվում է բյուջետային միջոցների հաշվին: Վաղ մանկությունից սկսած բուժումը շատ պարզ է, թանկ չէ և կանխարգելում է մեծ տարիքում լուրջ հաշմանդամությունը:
- **Ֆենիլկետոնուրիա** - բնածին արատ է, որն առաջանում է, երբ ֆենիլալանին ամինաթթուն չի քայքայվում և դրա կուտակումը վնասում է երեխայի ուղեղը՝ հանգեցնելով մտավոր հետամնացության: Դրա հետազոտումն ու կանխարգելումն սկսվել են 2008 թ.-ին, և այժմ բուժումը հատուկ սննդակարգ է, որն ապահովվում է բյուջետային միջոցների հաշվին:
- **Կոնքազորի զարգացող/բնածին հոդախախտը** նորածինների մոտ ամենահաճախ հանդիպող բնածին ձևախախտումն է (դիսպլազիան), սակայն աղջիկների մոտ այն 5-7 անգամ ավելի հաճախ է հանդիպում. հետազոտումը կատարվում է ծնվելուց հետո գերձայնային պատկերմամբ և բուժվում է Պավլիկի ասպանդակի միջոցով: Ուշ ախտորոշումը բուժվում է միայն վիրաբուժական միջամտությամբ: Ծրագիրը մեկնարկել է 2010թ. և իրականացվում է բոլոր մարզերում և Երևանում՝ Ջինիշյան հիշատակի հիմնադրամի աջակցությամբ:
- **Լսողության նորածնային սկրինինգում.** Համաձայն ԱՀԿ տվյալների 1000 նորածիններից 1-2-ի մոտ հայտնաբերվում է լսողության իջեցում, ևս 3-ի մոտ այն ի հայտ է գալիս կյանքի առաջին տարիների ընթացքում: Լսողության նորածնային սկրինինգը սկսվել է 2008 թ.-ին և իրականացվում է Արաբկիր և Էրեբունի բժշկական կենտրոններում՝ պետության ու նվիրատուների հովանավորությամբ և ՀԿ-ների սերտ համագործակցությամբ: Անկախ տարիքից, հայտնաբերված երեխաները վերցվում են հաշվառման, ապահովվում են լսողական սարքերով կամ կատարվում է կոխլեար իմպլանտացիայի վիրահատություն:
- **Տեսողական խնդիրներ.** Անհատության ռետինոպաթիան տեղի է ունենում այն ժամանակ, երբ նորածնի աչքի ցանցաթաղանթի անհաս արյունատար անոթները ոչ նորմալ են զարգանում: Դրա հետևանքով երեխան կարող է

<sup>10</sup> Տեղեկությունը վերցված է Առողջապահության նախարարության երեխաների առողջության պահպանման բաժնի պետ Նունե Փաշայանի զեկույցից, որն ընթերցվել է 2017 թ. դեկտեմբերի 19-ին ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորած MEASURE Evaluation ծրագրի շրջանակում կայացած Երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների մասնակցային գնահատական մեկնարկին նվիրված միջոցառման ժամանակ:

ունենալ տեսողության ծանր կորուս կամ անգամ կուրանալ: Ամեն տարի Հայաստանում մոտավորապես 400-600 երեխա հայտնվում է ռիսկային այդ խմբի մեջ: Ծրագիրն սկսվել է 2010 թ.-ին և իրականացվում է Երևանում ու Գյումրիում՝ «Լույս հայի աչքերին» հիմնադրամի հովանավորությամբ: Նման խնդիր ունեցող երեխաները ենթարկվել են կամ լազերային կանխարգելիչ վիրահատության, կա՛մ կոնսերվատիվ բուժման և, անհրաժեշտության դեպքում, վիրահատության: 2010-2017 թթ. ընթացքում բուժվել է շուրջ 244 երեխա:

- **Սրտի բնածին արատները** ևս վաղ հայտնաբերվող հիվանդություններից են:

Ինչպես նշեց ՀՀ առողջապահության նախարարության երեխաների առողջության պահպանման բաժնի պետ տիկ. Նունե Փաշայանը 2017 թ. դեկտեմբերի 19-ին, է 2005-2016 թթ. ընթացքում կանխվել է 750 երեխայի առողջական ծանր խնդիրներ: Սակայն ՀՀ ԱՆ-ում կամ ՀՀ ԱՍՀՆ-ում դժվար է պաշտոնական տվյալներ գտնել, որոնք փոխկապակցված ձևով ցույց տան, թե լսողական կամ վերոհիշյալ առողջական որևէ խնդրով երեխաներից քանիսն են ստացել հաշմանդամության կարգավիճակ կամ նրանցից քանիսն են ներգրավվել կրթության մեջ:

Ի լրումն կանխարգելիչ ծառայությունների, հաշմանդամություն ունեցող երեխաները ստանում են նաև բժշկական վերականգնողական ծառայություններ Երևանի ԱրԲԵՍ առողջության կենտրոնում և Գավառի, Գյումրիի, Արմավիրի, Իջևանի, Արտաշատի, Սպիտակի ու Վանաձորի Երեխաների զարգացման և վերականգնողական կենտրոններում:


Ինչպես 2017 թ. դեկտեմբերի 19-ին տեղեկացրել էր ՀՀ ԱՆ երեխաների առողջության պահպանման բաժնի պետ տիկ. Նունե Փաշայանը, առողջապահության ոլորտում զարգացման հապաղումներ ունեցող երեխաներին մատուցվում են նաև վաղ միջամտության և վերականգնողական ծառայություններ Վանաձորի, Սպիտակի ու Կապանի վերականգնողական կենտրոններում, Երևանի թիվ 9 պոլիկլինիկայում և թիվ 92 մանկապարտեզում, ինչպես նաև «Արմենակ և Աննա Թադևոսյանների կենտրոնում» ու «Արարատ» մանկական առողջարանում:

ՀՀ ԱՆ-ը կազմակերպում է նաև շուրջօրյա խնամքի հաստատություններում ապրող երեխաների բուժումն ու բժշկական ծառայությունների մատուցումը (հատկացնելով բժշկական խնամք, դեղամիջոցներ ու բուժական այլ պարագաներ)՝ անկախ նրանց վարչական պատկանելությունից:

Սակայն մատուցված ծառայությունները չեն բաղդատված ըստ երեխայի հաշմանդամության կարգավիճակի, իսկ մատուցված ծառայությունների չափի ու ծածկույթի մասին պաշտոնական որևէ հաշվետվություն կամ տեղեկատվություն հրապարակված չէ:

2012 թ.-ից սկսած, ՀՀ ԱՆ-ը ներդրել է առողջապահության ոլորտի միասնականացված ՏՏ համակարգ՝ Էլ-առողջապահության ՏՏ համակարգը<sup>11</sup>, որը ՀՀ ԱՆ-ին թույլ է տալիս հավաքագրել և ներկայացնել բնակչության կողմից ստացված առողջապահական ծառայությունների մասին համակարգված տվյալներ՝ դասակարգված ըստ տարիքի, սեռի և բնակության վայրի:


Համաձայն ՀՀ ԱՎԾ հրապարակած ՀՀ ԱՆ տվյալների, 2016 թ. դրությամբ հիվանդությունների պատճառով հաշմանդամություն է ստացել 7.598<sup>12</sup> երեխա, այդ թվում 1.008 երեխաների մոտ այն ախտորոշվել է առաջին անգամ 2016 թ.-ին: Ըստ տարիքի ու սեռի տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարիքային բոլոր խմբերում գերակշռում են տղաները:




**Գծապատկեր 2. 2016 թ.-ին հիվանդությունների պատճառով հաշմանդամություն ձեռք բերած երեխաների թիվը**

<sup>11</sup> Հի Կառավարության 2012 թ. հոկտեմբերի 25-ի թիվ 43 արձանագրային որոշում:

<sup>12</sup> Համաձայն ՀՀ ԱՍՀՆ-ից ստացված ՀՀ ԱՎԾ տվյալների, «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող երեխաների թիվը 8.177 էր: Այս անհամապատասխանությունն իր բացատրությունն ունի. առողջապահական տվյալները ներկայացնում են այն երեխաների թիվը, որոնց մոտ ախտորոշվել է հաշմանդամություն հիվանդությունների պատճառով, մինչդեռ ՀՀ ԱՍՀՆ տվյալները ներկայացնում են այն երեխաների թիվը, որոնց կարգավիճակը տրվել է, երբ ծնողները դիմել են վկայագրի համար:



Գծապատկեր 3. 2016 թ.-ին հիվանդությունների պատճառով հաշմանդամություն ձեռք բերած երեխաների թիվն ըստ տարիքի ու սեռի



Գծապատկեր 4. 2016 թ.-ին հիվանդությունների պատճառով հաշմանդամություն ձեռք բերած երեխաների տարիքային բաշխվածությունը տոկոսներով

Վերը բերված բոլոր աղյուսակների աղբյուրը՝ «ՀՀ սոցիալական վիճակը 2016 թ.» ՀՀ ԱՎԾ, մաս 9, կետ 9.9, էջ 372, [http://www.armstat.am/file/article/soc\\_2016\\_9.pdf](http://www.armstat.am/file/article/soc_2016_9.pdf), աղյուսակները կազմել են հեղինակները:

ՀՀ ԱՆ տվյալները ներառում են այն հիվանդությունների հանգամանալի վիճակագրությունը, որոնք երեխաների շրջանում առաջացրել են հաշմանդամություն. դրանք տարանջատված են ըստ երեխաների տարիքի ու սեռի, ինչպես նաև ժամանակային շարքերի՝ սկսած 2012 թ.-ից:

Աղյուսակ 2. Հիվանդություններից հաշմանդամ դարձած երեխաների թվաքանակն ըստ սեռի, 2016 թ

|                     | Ընդամենը | Ներառյալ |         | Ներառյալ 1-ին անգամ | Ներառյալ |         |
|---------------------|----------|----------|---------|---------------------|----------|---------|
|                     |          | Աղջիկներ | Տղամներ |                     | Աղջիկներ | Տղամներ |
| Նյարդային համակարգի | 2,764    | 923      | 1,841   | 309                 | 96       | 213     |

|                                                                                                              | Ընդամենը | Ներառյալ |        | Ներառյալ<br>1-ին<br>անգամ | Ներառյալ |        |
|--------------------------------------------------------------------------------------------------------------|----------|----------|--------|---------------------------|----------|--------|
|                                                                                                              |          | Աղջիկներ | Տղաներ |                           | Աղջիկներ | Տղաներ |
| որից՝                                                                                                        |          |          |        |                           |          |        |
| Էպիլեպսիա                                                                                                    | 632      | 191      | 441    | 68                        | 19       | 49     |
| մանկական ուղեղային<br>պարալիզ                                                                                | 1,312    | 460      | 852    | 89                        | 35       | 54     |
| մկանային դիստրոֆիա                                                                                           | 86       | 27       | 59     | 8                         | 1        | 7      |
| բնածին և ձեռքբերովի<br>(զարգացման հետ<br>կապված) միասթենիա                                                   | 94       | 37       | 57     | 16                        | 4        | 12     |
| Հոգեկան և վարքի<br>խանգարումներ                                                                              | 1,354    | 343      | 1,011  | 206                       | 66       | 140    |
| որից՝ մանկական<br>աուտիզմ, ատիպիկ<br>աուտիզմ                                                                 | 450      | 68       | 382    | 94                        | 21       | 73     |
| Ներգատական (էնդոկրին)<br>համակարգի<br>հիվանդություններ,<br>սնուցման և<br>նյութափոխանակության<br>խանգարումներ | 592      | 242      | 350    | 99                        | 38       | 61     |
| որից՝                                                                                                        |          |          |        |                           |          |        |
| վահանաձև գեղձի<br>հիվանդություններ                                                                           | 50       | 18       | 32     | 5                         | 3        | 2      |
| շաքարային դիաբետ                                                                                             | 331      | 156      | 175    | 46                        | 18       | 28     |
| պարբերական<br>հիվանդություն                                                                                  | 140      | 39       | 101    | 19                        | 7        | 12     |
| Աչքի և դրա օժանդակ<br>ապարատի<br>հիվանդություններ                                                            | 474      | 152      | 322    | 65                        | 21       | 44     |
| որից՝ տեսողական նյարդի<br>ապաճում (ատրոֆիա)                                                                  | 122      | 43       | 79     | 13                        | 3        | 10     |
| Ականջի և պտկաձև ելունի                                                                                       | 423      | 155      | 268    | 37                        | 10       | 27     |
| որից՝ լսողության<br>կոնդուկտիվային և<br>նեյրոսենսորային կորուստ                                              | 341      | 122      | 219    | 23                        | 8        | 15     |
| Ներքին օրգանների                                                                                             | 466      | 124      | 342    | 62                        | 18       | 44     |
| որից՝                                                                                                        |          |          |        |                           |          |        |
| Կրոնի հիվանդություն<br>(ռեզիոնար էնտերիտ)                                                                    | 13       | 5        | 8      |                           | -        | -      |
| Զարոնակ<br>նորագոյացություններ                                                                               | 246      | 92       | 154    | 34                        | 13       | 21     |
| որից՝ լիմֆոիդ (ավշային),<br>արյունաստեղծ և<br>նմանատիպ<br>հյուսվածքների                                      | 90       | 27       | 63     | 11                        | 2        | 9      |
| Վիրաբուժական                                                                                                 | 533      | 170      | 363    | 76                        | 20       | 56     |
| Մաշկային և<br>էնթամաշկային բջջանքի                                                                           | 36       | 5        | 31     | 6                         | 1        | 5      |
| Բնածին (զարգացման)<br>արատներ,<br>ձևախախտումներ և                                                            | 709      | 248      | 461    | 114                       | 42       | 72     |

|                                                                               | Ընդամենը     | Ներառյալ     |              | Ներառյալ<br>1-ին<br>անգամ | Ներառյալ   |            |
|-------------------------------------------------------------------------------|--------------|--------------|--------------|---------------------------|------------|------------|
|                                                                               |              | Աղջիկներ     | Տղաներ       |                           | Աղջիկներ   | Տղաներ     |
| քրոնոսումային<br>խանգարումներ                                                 |              |              |              |                           |            |            |
| որից՝                                                                         |              |              |              |                           |            |            |
| արյան շրջանառության<br>համակարգի բնածին<br>արատներ                            | 218          | 75           | 143          | 22                        | 6          | 16         |
| Հիրշպրունգի<br>հիվանդություն,<br>ագանգլիոնոզ բնածին<br>(ագանգլիոնիկ) մեգակլոն | 12           | 1            | 11           |                           | -          | 1          |
| բնածին իխթիոզ                                                                 | 10           | 1            | 9            |                           | -          | 1          |
| բշտային էպիդերմոլիզ                                                           |              | -            | 3            |                           | -          | -          |
| Դաունի համախտանիշ                                                             | 161          | 68           | 93           | 37                        | 15         | 22         |
| <b>Ընդամենը</b>                                                               | <b>7,597</b> | <b>2,454</b> | <b>5,143</b> | <b>1,008</b>              | <b>325</b> | <b>683</b> |

Աղբյուրը. «ՀՀ սոցիալական վիճակը 2016 թ.», ՀՀ ԱՎԾ, մաս 9, կետ 9.9, էջ 373,  
[http://www.armstat.am/file/article/soc\\_2016\\_9.pdf](http://www.armstat.am/file/article/soc_2016_9.pdf)

Առողջապահության ոլորտում հաշմանդամություն ունեցող երեխաների մասին առկա վիճակագրության հասանելիությունը ցույց է տալիս պատշաճ SS համակարգի առավելությունը, որը թույլ է տալիս որոշումների կայացման համար ստանալ և մշակել անհրաժեշտ տեղեկությունները՝ բաղդատված ըստ անհրաժեշտ մակարդակների: Հենվելով առողջապահության ոլորտում տվյալների ստացման, կառավարման ու վերլուծության առկա փորձի վրա, խորհուրդ է տրվում, որ լավագույն այդ փորձը կրկնօրինակվի ու կիրառվի սոցիալական և կրթության ոլորտներում: Ճշգրտության ու համակցման միևնույն մակարդակով տվյալների արտացոլումը սոցիալական ու կրթության ոլորտներում հնարավորություն կընձեռի հետևելու այն երեխաներին, որոնք «հաշմանդամ երեխայի» կարգավիճակ ունեն, այդ երեխաների ստացած ծառայություններին և տեսնել, թե նրանք ընդգրկված են արդյոք կրթական համակարգում, թե՞ ոչ: Բացի այդ, առաջարկվում է, որ հաշմանդամության սահմանման համար ՀՀ ԱՍՀՆ և ՀՀ ԱՆ միջև տվյալների հետագա համադրումն ու ներդաշնակեցումը կատարվեն հավուր պատշաճի՝ միևնույն բաղդատվածությամբ՝ ապահովելով ֆունկցիոնալ սահմանափակումների մասին տվյալների մատչելիությունը:

## 2.2. Հաշմանդամություն ունեցող երեխաների մասին պաշտոնական վիճակագրությունը կրթության ոլորտում

2014 թ. դեկտեմբերի 1-ին ընդունված «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին

ՀՀ օրենքում սահմանվում է, որ Հայաստանում կրթական ամբողջ համակարգը ներառական է, և բոլոր երեխաները պետք է սովորեն հանրակրթական դպրոցներում<sup>13</sup>: Օրենքը երեք մակարդակի մանկավարժահոգեբանական գնահատում/աջակցություն է նախատեսում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար. առաջին մակարդակը պետք է տրամադրվի դպրոցների/մանկապարտեզների կողմից, երկրորդը՝ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից, իսկ երրորդ մակարդակը՝ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից<sup>14</sup>:

Նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենքի նոր խմբագրության մեջ, որը, նախքան Ազգային ժողով ներկայացնելը, գտնվում է հանրային քննարկման փուլում<sup>15</sup>, նույնպես սահմանում է բոլոր երեխաների համար նախադպրոցական ներառական կրթության մասին, և կանոնակարգվում է երեխաների հատուկ կրթական կարիքների գնահատումը և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների հատկացումը:

Հանրակրթության մասին ՀՀ օրենքում կատարված լրացումների ընդունմամբ ՀՀ կառավարությունը հավանություն է տվել մինչև 2025 թ. օգոստոսի 1-ը Համընդհանուր ներառական կրթական համակարգի ներդրման գործողությունների ծրագրին ու ժամանակացույցին («Համընդհանուր ներառական կրթական համակարգի ներդրման գործողությունների ծրագիրը և ժամանակացույցը հաստատելու մասին» կառավարության 2016 թ. փետրվարի 18-ի որոշումը): Այդ ծրագրի համաձայն, բոլոր հատուկ դպրոցներն աստիճանաբար վերակազմավորվում են մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների՝ կանոնավոր մասնագիտական աջակցություն տրամադրելով իրենց սպասարկման տարածքների դպրոցներին ու մանկապարտեզներին՝ գնահատելու համար երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքները (ԿԱՊԿ) և կազմակերպելու համար անհատ մասնագետի աջակցություն՝ համաձայն աշակերտների անհատական ուսումնական պլանների և/կամ անհատական զարգացման ծրագրերի: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը պատասխանատու է տարածքային ՄՀԱՏԿ-ների վերապատրաստման ու ղեկավարման և երկրի կրթական հաստատություններում կրթական

<sup>13</sup> ՀՀ օրենք ՀՕ-200-Ն, 2014 թ. դեկտեմբերի 1. <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=94683>

<sup>14</sup> Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը ծառայություններ կտրամադրի այն մարզերին, որոնցում չկան տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ: 2025 թ.-ից հետո, երբ բոլոր հատուկ դպրոցները կվերակազմավորվեն, և բոլոր մարզերը կունենան ՄՀԱՏԿ-ներ, ՀՄՀԿ-ները ԿԱՊԿ գնահատում կկատարեն միայն վիճելի դեպքերում:

<sup>15</sup> Նախադպրոցական կրթության մասին օրենքի նախագծի նոր խմբագրություն. <https://www.e-draft.am/projects/504/about>

ծառայություններ ստացող ԿԱՊԿ և/կամ հաշմանդամություն ունեցող երեխաների մասին տվյալների շտեմարանի վարման համար:


Ներառական կրթություն ապահովող դպրոցների թիվն ընդամենը 246 էր կամ 2017 թ. Հայաստանի դպրոցների միան 17%-ը<sup>16</sup>. Այդ դպրոցներում սովորող և իբրև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող գնահատված երեխաների թիվը 6,660 էր կամ երկրի հանրակրթական դպրոցներում սովորող բոլոր աշակերտների մոտ 2%-ը:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը կատարվում է ՀՀ Կրթության և գիտության նախարարի 2017 թ. ապրիլի 13-ի թիվ 370/A2 հրամանի համաձայն: Հրամանը կարգավորում է մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրումը և երեխաների գնահատումը: ՄՀԱՏԿ կողմից երեխայի գնահատումը (գնահատման երկրորդ մակարդակ) պետք է կատարվի դպրոցում և պետք է տևի առնվազն հինգ օր՝ երեխային իր սովորական միջավայրում դիտելու և երեխայի գործունեության ու մասնակցության սահմանափակումների, ուժեղ ու թույլ կողմերի որոշման համար հարկ եղած տեղեկությունները հավաքելու նպատակով: Գնահատման արդյունքների հիման վրա երեխան կարող է գնահատվել իբրև ստորև թվարկված մեկ կամ ավելի ոլորտներում ֆունկցիայի սահմանափակում ունեցող.

1. լսողական խանգարումներ,
2. իմացական (մտավոր) խնդիրներ,
3. շարժունակություն,
4. ձայն և խոսք,
5. տեսողական խանգարումներ:

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի մասին ՄՀԱՏԿ որոշումը պետք է տրամադրվի ծնողին՝ դպրոց ներկայացնելու համար, իսկ պատճենը պետք է պահվի ՀՄՀԿ-ում: Դպրոցի տնօրենը պետք է տեղեկացնի համապատասխան մարզի կամ Երևանի վարչական շրջանի Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի մարզային բաժիններին՝ երեխայի ԿԱՊԿ ունենալու վկայագիրը ստանալու համար, որը երեխայի կրթության հավելյալ ֆինանսական օժանդակության հիմք կդառնա: Հետևելով ՀՀ ԱՍՀՆ կարգին՝ Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բաժինները ԿԱՊԿ ունեցող երեխայի տվյալները պետք է մուտքագրեն տվյալների «Մանուկ» տեղեկատվական համակարգի մեջ՝ այդպիսով ապահովելով, որ կառավարության ծառայություններից հատուկ աջակցության կարիք ունեցող յուրաքանչյուր երեխա գրանցված լինի, և աջակցությունը պատշաճ կերպով վերահսկվի:

<sup>16</sup> Տվյալները, հեղինակների գրավոր դիմումի հիման վրա, տրամադրել են ԿԳՆ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կողմից: Հաշվարկները կատարված են հեղինակների կողմից:



**Քննադատներ 5. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (ԿԱՊԿ) կամ հաշմանդամություն ունեցող երեխաների մասին տեղեկատվության հոսքի ցուցադրություն**

*Աղբյուրը. ESI Consulting Group*

Սակայն ՀՀ ԱՍՀՆ «Մանուկ» տեղեկատվական համակարգից կամ ԿԳՆ-ի միջոցով ՀՄՀԿ որևէ տվյալ չի տրամադրվում ՀՀ ԱՎԾ-ին կամ ԿԱՊԿ ունեցող երեխաների թվի մասին որևէ տեղեկատվություն հանրայնորեն առկա չէ: Այսպիսով, կարևոր է հստակեցնել, թե որքանով են պահպանվում այդ կանոնակարգերը, և ինչպիսին է «Մանուկ» տեղեկատվական համակարգում ԿԱՊԿ ունեցող երեխաների մասին առկա տեղեկատվության ճշգրտության աստիճանը:

Մինչ այդ, Աղյուսակ 3-ում ներկայացված են Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) կողմից տրամադրված վիճակագրական տեղեկությունները:

**Աղյուսակ 3. ԿԱՊԿ ունեցող երեխաների թվաքանակն ըստ մարզերի ու սեռի, 2017 թ.**

| Մարզ      | Ընդամենը | Աղջիկներ | Տղաներ |
|-----------|----------|----------|--------|
| Երևան     | 2,938    | 939      | 1,999  |
| Արագածոտն | 51       | 16       | 35     |
| Արարատ    | 116      | 32       | 84     |
| Արմավիր   | 864      | 292      | 572    |

| Մարզ            | Ընդամենը     | Աղջիկներ     | Տղաներ       |
|-----------------|--------------|--------------|--------------|
| Գեղարքունիք     | 121          | 43           | 78           |
| Լոռի            | 464          | 183          | 281          |
| Կոտայք          | 201          | 57           | 144          |
| Շիրակ           | 909          | 349          | 560          |
| Սյունիք         | 230          | 94           | 136          |
| Վայոց ձոր       | 88           | 23           | 65           |
| Տավուշ          | 678          | 221          | 457          |
| <b>Ընդամենը</b> | <b>6,660</b> | <b>2,249</b> | <b>4,411</b> |

*Աղբյուրը. ԿՏԱԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվություն 2017 թ. դեկտեմբեր*

Հնարավոր չէ տեսնել, թե այդ երեխաներից քանիսն ունեն նաև «հաշմանդամ երեխայի» կարգավիճակ: Բացի այդ, ԿՏԱԿ-ը տվյալներ չի հրապարակում ԿԱՊԿ ունեցող երեխաների ֆունկցիոնալության սահմանափակումների ծանրության աստիճանի մասին: 2016 թ. ԿՏԱԿ-ը՝ ՀՄՀԿ հետ համատեղ, մշակել է տեղեկատվական համակարգ, որտեղ հաշվառվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի երկրորդ մակարդակի գնահատման արդյունքները և մանկավարժահոգեբանական աջակցություն ստացող բոլոր երեխաները: Սակայն, լրացուցիչ հստակեցման կարիք ունի նաև այն, թե որքանով կարող են այդ տվյալները համադրվել ՀՀ ԱՍՀՆ «Մանուկ» տեղեկատվական համակարգի տվյալների հետ, և կա՞րդյոք հնարավորություն ԿԱՊԿ ունեցող երեխաների մասին ստացված տեղեկատվությունը փոխանցել «Էլ-հաշմանդամություն» տեղեկատվական համակարգին՝ օգտագործելով այն երեխայի հաշմանդամությունը սահմանելու ժամանակ, կամ այդ տեղեկատվությունը ԿՏԱԿ-ի շտեմարանում առկա կարգավիճակի հետ խաչաձև ստուգելու նպատակով:

Բացի հանրակրթական դպրոցներից, բազմաթիվ ԿԱՊԿ ունեցող երեխաներ շարունակում են կրթական ծառայություններ ստանալ հատուկ դպրոցներում: 2015-2016 թթ. ընթացքում հատուկ դպրոցների թիվը նվազել է չորսով՝ համընդհանուր ներառական կրթական համակարգի անցնելու ՀՀ կառավարության միջոցառումների ծրագրին համաձայն Սյունիքի և Լոռու մարզերում հատուկ դպրոցների վերակազմավորման ու փակման արդյունքում:

Սակայն հատուկ դպրոցների մասին ՀՀ ԱՎԾ հրապարակած պաշտոնական վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ Արմավիրի մարզում նոր հատուկ դպրոց է բացվել՝ դրանով երկրի հատուկ դպրոցներում սովորող երեխաների թիվն ավելացնելով՝ 2,218-ից հասնելով 2,267-ի<sup>17</sup>:

Աղյուսակ 4-ից երևում է, որ Սյունիքի ու Լոռու մարզերի հատուկ դպրոցներում երեխաների թիվը նկատելիորեն կրճատվել է՝ համապատասխանաբար 95 և 33

<sup>17</sup> ՀՀ սոցիալական վիճակը 2016 թ.-ին, ՀՀ ԱՎԾ, 2017 թ., էջ 72 և էջ 76.

[http://www.armstat.am/file/article/soc\\_2016\\_2.pdf](http://www.armstat.am/file/article/soc_2016_2.pdf)

երեխայով: Սակայն Երևանի և հատկապես Արմավիրի մարզի հատուկ դպրոցներում սովորող երեխաների թիվն աճել է՝ Երևանում 20, իսկ Արմավիրի մարզում՝ մտահոգիչ թվով՝ 169 աշակերտով: ՀՀ ԿԳՆ պարզաբանումը լույս սփռեց շփոթեցնող այդ վիճակագրության վրա. հատուկ դպրոցներն ու մասնագիտացված դպրոցները, որոնց մեջ են մտնում ռազմական, երաժշտական ու մաթեմատիկական դպրոցները, կարգավորվում են իրավական ու ֆինանսական միևնույն մեխանիզմներով, ուստիև դիտարկվում են միևնույն խմբի մեջ: Հետագա շփոթությունից և հատուկ դպրոցների մասին տվյալների սխալ մեկնաբանությունից խուսափելու համար հատուկ դպրոցների և մասնագիտացված դպրոցների մասին վիճակագրությունն ու տվյալների ներկայացումը պետք է առանձնացվեն:

**Աղյուսակ 4. Հատուկ դպրոցների թիվն ըստ մարզերի 2012-2016 թթ.**

|                 | 2012      | 2013      | 2014      | 2015      | 2016      |
|-----------------|-----------|-----------|-----------|-----------|-----------|
| Երևան           | 13        | 13        | 13        | 13        | 13        |
| Արագածոտն       | 1         | 1         | 1         | 1         | 1         |
| Արարատ          | -         | -         | -         | -         | -         |
| Արմավիր         | 2         | 2         | 2         | 2         | 3         |
| Գեղարքունիք     | 1         | 1         | 1         | 1         | 1         |
| Լոռի            | 3         | 3         | 3         | 3         | 3         |
| Կոտայք          | 1         | 1         | 1         | 1         | 1         |
| Շիրակ           | 2         | 2         | 2         | 2         | 2         |
| Սյունիք         | 4         | 4         | 4         | 4         | 1         |
| Վայոց ձոր       | -         | -         | -         | -         | -         |
| Տավուշ          | -         | -         | -         | -         | -         |
| <b>Ընդամենը</b> | <b>27</b> | <b>27</b> | <b>27</b> | <b>27</b> | <b>25</b> |

Աղբյուրը. «ՀՀ սոցիալական վիճակը 2016 թ.-ին», ՀՀ ԱՎԾ, 2017 թ.


[http://www.armstat.am/file/article/soc\\_2016\\_2.pdf](http://www.armstat.am/file/article/soc_2016_2.pdf)

**Աղյուսակ 5. Հատուկ դպրոցներում աշակերտների թվաքանակն ըստ մարզերի 2012-2016 թթ.**

|             | 2012  | 2013  | 2014  | 2015  | 2016  | Հաշվեկշիռը<br>2015 և<br>2016թթ. միջև |
|-------------|-------|-------|-------|-------|-------|--------------------------------------|
| Երևան       | 1,454 | 1,325 | 1,413 | 1,409 | 1,429 | 20                                   |
| Արագածոտն   | 44    | 48    | 49    | 46    | 42    | -4                                   |
| Արարատ      | -     | -     | -     | -     | -     | 0                                    |
| Արմավիր     | 149   | 171   | 191   | 199   | 368   | 169                                  |
| Գեղարքունիք | 49    | 56    | 58    | 38    | 41    | 3                                    |
| Լոռի        | 265   | 219   | 199   | 164   | 131   | -33                                  |
| Կոտայք      | 47    | 47    | 41    | 44    | 39    | -5                                   |
| Շիրակ       | 128   | 123   | 119   | 122   | 116   | -6                                   |

|                 | 2012         | 2013         | 2014         | 2015         | 2016         | Հաշվեկշիռը<br>2015 և<br>2016թթ. միջև |
|-----------------|--------------|--------------|--------------|--------------|--------------|--------------------------------------|
| Սյունիք         | 265          | 258          | 227          | 196          | 101          | -95                                  |
| Վայոց ձոր       | -            | -            | -            | -            | -            |                                      |
| Տավուշ          | -            | -            | -            | -            | -            |                                      |
| <b>Ընդամենը</b> | <b>2,401</b> | <b>2,247</b> | <b>2,297</b> | <b>2,218</b> | <b>2,267</b> | <b>49</b>                            |

Աղբյուրը. «ՀՀ սոցիալական վիճակը 2016 թ.-ին», ՀՀ ԱՎԾ, 2017 թ. և մեր հաշվարկները



Գծապատկեր 6. Հատուկ դպրոցներում աշակերտների թվաքանակը, 2012-2016թթ.-ին

Աղբյուրը. «ՀՀ սոցիալական վիճակը 2016 թ.-ին», ՀՀ ԱՎԾ, 2017 թ.

Հատուկ դպրոցներում աշակերտների թվաքանակի վերլուծությունն ըստ դպրոցների ուղղվածության ու մարզերի ցույց է տալիս, որ աշակերտների գրեթե 50%-ը սովորում է մտավոր հետամնացություն ունեցող երեխաների համար նախատեսված դպրոցներում: Աշակերտների թվով երկրորդ տեղում են տեսողության խանգարում ունեցողների համար դրպոցները, ապա խոսքի խանգարումներով և լսողական խնդիրներով երեխաների համար նախատեսված հատուկ դպրոցները: «Այլ տեսակի» ձևակերպումը վերաբերում է միայն Արմավիրի մարզին, որտեղ նշված 159 երեխաները սովորում են ռազմական մասնագիտացված դպրոցում: Եթե հատուկ դպրոցների աշակերտների ընդհանուր թվաքանակից (2.267) հանենք Արմավիրի մասնագիտացված դպրոցում սովորող երեխաների թիվը (159), ապա հատուկ դպրոցներում աշակերտների ընդհանուր թվաքանակն (2.108)՝ 110 աշակերտով ավելի ցածր կլինի, քան 2015 թ.-ին գրանցված 2.218-ը:

**Աղյուսակ 6. Հատուկ հանրակրթական դպրոցների աշակերտների թվաքանակն ըստ ուղղվածության, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2016/2017 ուս. տարի**

| Մարզ            | Խոսքի խանգարում ունեցող երեխաների | Լսողության խանգարում ունեցող երեխաների | Տեսողության խանգարում ունեցող երեխաների | Մտավոր հետամնացություն ունեցող երեխաների | Հենաշարժողական համակարգի խախտումներ ունեցող երեխաների | Հակասոցիալական վարք դրսևորած երեխաների | Այլ        | Ընդամենը     |
|-----------------|-----------------------------------|----------------------------------------|-----------------------------------------|------------------------------------------|-------------------------------------------------------|----------------------------------------|------------|--------------|
| Երևան           | 93                                | 130                                    | 398                                     | 656                                      | 78                                                    | 74                                     | -          | 1,429        |
| Արագածոտն       | -                                 | -                                      | -                                       | 42                                       | -                                                     | -                                      | -          | 42           |
| Արարատ          | -                                 | -                                      | -                                       | -                                        | -                                                     | -                                      | -          | -            |
| Արմավիր         | -                                 | -                                      | -                                       | 209                                      | -                                                     | -                                      | 159        | 368          |
| Գեղարքունիք     | -                                 | -                                      | -                                       | 41                                       | -                                                     | -                                      | -          | 41           |
| Լոռի            | -                                 | -                                      | -                                       | 131                                      | -                                                     | -                                      | -          | 131          |
| Կոտայք          | -                                 | -                                      | -                                       | 39                                       | -                                                     | -                                      | -          | 39           |
| Շիրակ           | -                                 | -                                      | -                                       | 116                                      | -                                                     | -                                      | -          | 116          |
| Սյունիք         | 101                               | -                                      | -                                       | -                                        | -                                                     | -                                      | -          | 101          |
| Վայոց ձոր       | -                                 | -                                      | -                                       | -                                        | -                                                     | -                                      | -          | -            |
| Տավուշ          | -                                 | -                                      | -                                       | -                                        | -                                                     | -                                      | -          | -            |
| <b>Ընդամենը</b> | <b>194</b>                        | <b>130</b>                             | <b>398</b>                              | <b>1,234</b>                             | <b>78</b>                                             | <b>74</b>                              | <b>159</b> | <b>2,267</b> |

Աղբյուրը. «ՀՀ սոցիալական վիճակը 2016 թ.-ին», ՀՀ ԱՎԾ, 2017 թ.

2013 թ. ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ ՀՀ ԿԳՆ-ը նախաձեռնեց բարեփոխելու ԿԱՊԿ-ի գնահատման քաղաքականությունն ու գործիքները՝ ուսումնասիրելով և տեղայնացնելով միջազգային լավագույն փորձը, մասնավորապես Պորտուգալիայում կիրառվող առաջադեմ մեթոդաբանությունը: Պորտուգիա համալսարանի փորձագետները ՀՄՀԿ-ի (որը մինչև 2016 թ. կոչվում էր Բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն), ՀՀ ԿԳՆ, Երևանի պետական համալսարանի, Պետական մանկավարժական համալսարանի և Հույսի կամուրջ ՀԿ-ի անձնակազմի ընտրված անդամների հետ կազմակերպեցին ութամսյա խորացված ուսուցում ու խորհրդատվություն<sup>18</sup> նոր մոտեցումների վերաբերյալ: Առաջարկվող մեթոդաբանությունը հիմնված է ԱՀԿ ՖՄԴ-ի վրա և ենթադրում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման երկու մակարդակ. առաջին մակարդակը կատարվում է դասարանում, ուսուցչի կողմից, իսկ երկրորդ մակարդակը՝ դպրոցում,

<sup>18</sup> Report on Consultancy Project: Special Education Needs Assessment, February–October, 2013, Consultants: Manuela Sanches Ferreira and Rune J. Simeonsson, Staff-members: Mónica Silveira Maia and Silvia Alves.

Մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մասնագետների կողմից: Նոր մեթոդաբանությունը նախատեսում է ըստ տարիքային խմբերի առանձնացված գործիքներ, որոնց միջոցով հնարավոր է գնահատել երեխայի ֆունկցիոնալ սահմանափակումները, ուժեղ ու թույլ կողմերը և գրանցել արդյունքները ԱՀԿ ՖՄԴ կողերի ու որակիչների կիրառմամբ: Մշակվել է մանրամասն մեթոդական ուղեցույց, և ակնկալվում էր, որ նոր մոտեցումը կհաստատվի նախարարության կողմից՝ գործնական կիրառման համար: Սակայն ՄՀԱՏԿ-ի ու դպրոցների անձնակազմերի ուսուցումը ցույց տվեց, որ ուսուցման կարճատև դասընթացներից հետո մասնագետներն ու ուսուցիչները չէին կարողանում հասկանալ ԱՀԿ ՖՄԴ մոտեցումը և կողերի ու որակիչների կիրառումը: Հետևաբար, հաշվի առնելով այդ փորձառությունը՝ ՀՀ ԿԳՆ-ն հաստատեց «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը» և տեղեկաբերության փոխանակման մոտեցումներն առանց ԱՀԿ ՖՄԴ կողերի գործածման»<sup>19</sup>:

Սա մարտահրավեր է, քանի որ ՀՀ կառավարության կողմից 2014 թ. ընդունված արձանագրային որոշումը և ԱՀԿ ՖՄԴ-ի ընդունումն որպես պետական ստանդարտ, պահանջում է համապատասխան բոլոր ոլորտներից հաշմանդամության մասին տեղեկատվությունը փոխանցել ԱՀԿ ՖՄԴ կողերի ու որակիչների գործածմամբ<sup>20</sup>:

ՀՀ ԱՍՀՆ, ԿԳՆ և ԱՆ միջև մեկ ընդհանուր լեզվի կիրառմամբ պահանջվող տեղեկատվության փոխանակումը կարևոր նախապայման է բարելավելու հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների վերաբերյալ պետական քաղաքականությունն ու մատուցվող ծառայությունների որակը:

## 2.3. Հաշմանդամություն ունեցող երեխաների մասին պաշտոնական վիճակագրությունը սոցիալական պաշտպանության ոլորտում

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պատասխանատու է հաշմանդամություն ունեցող անձանց կենսաթոշակներ ու նպաստներ նշանակելու և դրանք վճարելու համար: «Հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող երեխաներին նույնպես նշանակվում է հաշմանդամության նպաստ՝ 21.500 դրամ չափով: Պաշտոնական վիճակագրության համաձայն, հաշմանդամություն ունեցող երեխաները, ում նշանակվել է/վճարվել է հաշմանդամության նպաստ 2016 թ. կազմել են 7.553 մարդ, ինչը «հաշմանդամ երեխայի» կարգավիճակ ունեցող երեխաների ամբողջ թվի 92%-ն է: Տարբերությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ պետական ֆինանսավորմամբ հաստատություններում՝ մանկատներում խնամվող երեխաներին հաշմանդամության նպաստ չի վճարվում:

<sup>19</sup> <http://edu.am/index.php/am/about/view/107>

<sup>20</sup> ՀՀԿ 2014 թ. հունվարի 9-ի արձանագրային որոշումը. [http://www.mlsa.am/?page\\_id=1264](http://www.mlsa.am/?page_id=1264)

ՀՀ ԱՍՀՆ պաշտոնական տվյալների համաձայն, 2016 թ. պետական հաստատությունների խնամքի տակ եղել է 481 երեխա: Մնացած դեպքերի համար բացատրությունը կարող է լինել այն, որ այդ երեխաները երկրում չեն, կամ նրանց ծնողները չեն դիմել նպաստի համար:

**Աղյուսակ 7. Հաշմանդամության նպաստ ստացող հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը 2016 թ.**

|          | Հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը | Հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը, որոնք հաշմանդամության նպաստ են ստանում | Տարբերություն. Հաշմանդամություն ունեցող երեխաները, որոնք նպաստ չեն ստանում | Հաշմանդամություն ունեցող այն երեխաների տոկոսը, որոնք պետական նպաստ են ստանում |
|----------|-----------------------------------------|---------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------|
| Ընդամենը | 8,177                                   | 7,553                                                                           | 624                                                                        | 92%                                                                           |
| Աղջիկներ | 2,598                                   | 2,364                                                                           | 234                                                                        | 91%                                                                           |
| Տղաներ   | 5,579                                   | 5,189                                                                           | 390                                                                        | 93%                                                                           |

Աղբյուրը. «ՀՀ սոցիալական վիճակը 2016 թ.-ին», ՀՀ ԱՎԾ, 2017 թ. և մեր հաշվարկները

Պաշտոնական վիճակագրության համաձայն<sup>21</sup>, հաշմանդամություն ունեցող երեխաների 38%-ն ապրում է անապահով/աղքատ ընտանիքներում, որոնք ստանում են ընտանեկան նպաստ: ՀՀ ԱՎԾ կողմից ամեն տարի կատարվող Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունը (ՏՏԿԱՀ) նույնպես ցույց է տալիս, որ ընտանիքում հաշմանդամություն ունեցող անդամի առկայությունը մեծացնում է ընտանիքի աղքատ լինելու հավանականությունը: Հաշմանդամություն ունեցող երեխաներով ընտանիքների աղքատության մակարդակը 34,2% է՝ իսկ երկրի միջինը՝ 29,4%: Եթե երեխաներն ապրում են հաշմանդամություն ունեցող մեծի հետ, աղքատության հավանականությունն աճում է՝ դառնալով 40%: Իր 2016 թ. հաշվետվության մեջ ՀՀ ԱՎԾ-ն հաշմանդամություն ունեցող երեխաների աղքատության մակարդակի մասին տվյալներ չի ներկայացնում, քանի որ տվյալները վիճակագրորեն վավեր չեն՝ ընտրանի շեղման սխալի պատճառով: Այնուամենայնիվ, 2015 թ. ՏՏԿԱՀ տվյալները ցույց են տալիս, որ հաշմանդամություն ունեցող երեխաները կազմում են մանկահասակ բնակչության ընդամենը 1,3%-ը, սակայն նրանց 46,2%-ն աղքատ է, իսկ 11,1%-ը՝ ծայրահեղ աղքատ: Այդ երեխաները կազմում են աղքատ երեխաների 1,8%-ը, և նրանց աղքատության խորությունը միջին հաշվով կազմում է 12 տոկոս՝ աղքատության շեմից<sup>22</sup>:

<sup>21</sup> Աղբյուրը. «ՀՀ սոցիալական վիճակը 2016 թ.-ին», ՀՀ ԱՎԾ, 2017 թ.:

<sup>22</sup> Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, ՀՀ ԱՎԾ 2016, [http://www.armstat.am/file/article/poverty\\_2016\\_eng\\_2.pdf](http://www.armstat.am/file/article/poverty_2016_eng_2.pdf)

ՀՀ ԱՎԾ հրապարակած ՀՀ ԱՍՀՆ վարչական տվյալները ցույց են տալիս, որ հաշմանդամություն ունեցող միայն երեք երեխա է ապրում գիշերային խնամքի հաստատություններում (Աղյուսակ 8), իսկ հաշմանդամություն ունեցող 461 երեխա ապրում են մասնագիտացված մանկատներում (Աղյուսակ 9): Հարկ է նշել, որ մանկատներում խնամվող հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը 2014 թ. տվյալների համեմատ նվազել է, սակայն աճել է՝ 2015 թ. տվյալների համեմատ (Գծապատկեր 6):

**Աղյուսակ 8. Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների երեխաների թվաքանակն ըստ տարիքային խմբերի, 2016թ.**

|                                | Երեխաների թիվը |                    | Ներառյալ տարիքային խմբերը |                    |             |                    |               |                    |               |                    |
|--------------------------------|----------------|--------------------|---------------------------|--------------------|-------------|--------------------|---------------|--------------------|---------------|--------------------|
|                                |                |                    | 1-5 տարեկան               |                    | 6-9 տարեկան |                    | 10-14 տարեկան |                    | 15-17 տարեկան |                    |
|                                | Ընդամենը       | Ներառյալ աղջիկները | Ընդամենը                  | Ներառյալ աղջիկները | Ընդամենը    | Ներառյալ աղջիկները | Ընդամենը      | Ներառյալ աղջիկները | Ընդամենը      | Ներառյալ աղջիկները |
| Երեխաների թվաքանակը տարեվերջին | 609            | 284                | 12                        | 8                  | 204         | 94                 | 307           | 137                | 86            | 45                 |
| այդ թվում                      |                |                    |                           |                    |             |                    |               |                    |               |                    |
| Դպրոց հաճախող                  | 451            | 202                | 8                         | 5                  | 153         | 67                 | 237           | 105                | 53            | 25                 |
| Հաշմանդամություն ունեցող       | 3              | 2                  | -                         | -                  | 1           | 1                  | 1             | -                  | 1             | 1                  |
| նրանցից՝ դպրոց հաճախող         | 3              | 2                  | -                         | -                  | 1           | 1                  | 1             | -                  | 1             | 1                  |


Աղբյուրը. «ՀՀ սոցիալական վիճակը 2016 թ.-ին», ՀՀ ԱՎԾ, 2017 թ.

[http://www.armstat.am/file/article/soc\\_2016\\_15.pdf](http://www.armstat.am/file/article/soc_2016_15.pdf)

**Աղյուսակ 9. Մանկատներում խնամվող երեխաների թվաքանակը 2016 թ.**

|                                | Ընդամենը |       |       |       |       | Այդ թվում աղջիկներ |       |       |       |       |
|--------------------------------|----------|-------|-------|-------|-------|--------------------|-------|-------|-------|-------|
|                                | 2012     | 2013  | 2014  | 2015  | 2016  | 2012               | 2013  | 2014  | 2015  | 2016  |
| Երեխաների թվաքանակը տարեվերջին | 877      | 927   | 951   | 864   | 810   | 427                | 438   | 452   | 408   | 365   |
| նրանցից՝                       |          |       |       |       |       |                    |       |       |       |       |
| անկողնային                     | 194      | 186   | 239   | 76    | 77    | 92                 | 86    | 115   | 39    | 41    |
| քրոնիկ հոգեկան շեղում-ներով    | 297      | 358   | 311   | 305   | 224   | 130                | 155   | 137   | 135   | 98    |
| դպրոց հաճախող                  | 139      | 327   | 369   | 328   | 346   | 61                 | 161   | 176   | 163   | 168   |
| հաշմանդամ                      | 461      | 475   | 521   | 469   | 478   | 210                | 213   | 236   | 213   | 205   |
|                                | 52.6%    | 51.2% | 54.8% | 54.3% | 59.0% | 49.2%              | 48.6% | 52.2% | 52.2% | 56.2% |

Աղբյուրը. «ՀՀ սոցիալական վիճակը 2016 թ.-ին», ՀՀ ԱՎԾ, 2017 թ.



**Գծապատկեր 7. Հաշմանդամություն ունեցող երեխաների թվաքանակի դինամիկան մանկատներում**  
 Աղբյուրը. «ՀՀ սոցիալական վիճակը 2016 թ.-ին», ՀՀ ԱՎԾ, 2017 թ.

«Հաշմանդամ երեխա» կարգավիճակ ստանալուց հետո երեխաներին առաջարկվում է բժշկական, կրթական ու վերականգնողական ծառայությունների ցանկ, համաձայն Վերականգնողական անհատական ծրագրի: Ստորև՝ Աղյուսակ 10-ում ներկայացված է 2016 թ.-ին հաշմանդամություն ունեցող անձանց այդ թվում երեխաների կողմից ստացված բժշկական, մասնագիտական ու սոցիալական վերականգնողական ծառայությունները: Այդ տվյալներն ընդգրկում են միայն ՀՀ ԱՍՀՆ կողմից մատուցվող ծառայությունները: Բացակայում է ցերեկային խնամքի կենտրոններում ծառայություն ստացող հաշմանդամություն ունեցող երեխաների մասին տեղեկատվությունը:

Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների համար ՀՀ ԱՍՀՆ կողմից՝ պետական ֆինանսավորմամբ իրականացնում է 11 ծրագիր, սակայն հնարավոր չէ տեսնել որևէ պաշտոնական ամփոփ վիճակագրություն թե, քանի երեխա է մասնակցում այդ ծրագրերում, ինչպես նաև չկա տեղեկատվություն այդ ծրագրերի շրջանակում մատուցված ծառայությունների տեսակների մասին, բաղդատված ըստ երեխաների սեռի, տարիքի ու հաշմանդամության տեսակի:

ՀՀ ԱՍՀՆ կողմից պետական ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի ՄնԳ համակարգի ներդրմամբ, ՀՀ ԱՍՀՆ-ի հետ պայմանագրային հիմունքներով երեխաներին ծառայություններ մատուցող բոլոր կառույցները պետք է շահառուների մասին հանգամանալի տեղեկատվություն տրամադրեն՝ մուտքագրելով այն «Մանուկ» տեղեկատվական համակարգ: Սակայն այդ տեղեկատվությունը հանրայնորեն մատչելի չի և գործածվում է միայն ներքին ՄնԳ նպատակներով:

**Աղյուսակ 9. Վերականգնողական օգնություն ստացած հաշմանդամների թվաքանակն ըստ վերականգնողական գործունեության տեսակի, 2016թ. տարեվերջ**

|                                                                 | Հաշմանդամություն ունեցող անձանց ընդհանուր թիվը |                | նրանցից հաշմանդամություն ունեցող երեխաները |                   |
|-----------------------------------------------------------------|------------------------------------------------|----------------|--------------------------------------------|-------------------|
|                                                                 | Ընդամենը                                       | նրանցից կանայք | Ընդամենը                                   | նրանցից աղջիկները |
| <b>Բժշկական վերականգնում</b>                                    | <b>212,625</b>                                 | <b>103,168</b> | <b>8,582</b>                               | <b>2,782</b>      |
| այդ թվում՝                                                      |                                                |                |                                            |                   |
| վերականգնողական բուժում                                         | 193,468                                        | 94,478         | 7,228                                      | 2,298             |
| վերակառուցողական վիրաբուժություն                                | 2,313                                          | 1,111          | 277                                        | 85                |
| առողջարանային բուժում                                           | 5,323                                          | 2,798          | 69                                         | 31                |
| պրոթեզաօրթոպեդիկ օգնություն                                     | 3,616                                          | 978            | 417                                        | 139               |
| այդ թվում՝                                                      |                                                |                |                                            |                   |
| պրոթեզ                                                          | 1,209                                          | 237            | 21                                         | 5                 |
| օրթեզ                                                           | 426                                            | 139            | 218                                        | 60                |
| օրթո-պրոթեզ                                                     | 20                                             | 3              | 6                                          | 2                 |
| ռեկլինատոր                                                      | 6                                              | -              | -                                          | -                 |
| կռշիկ                                                           | 1,132                                          | 338            | 124                                        | 48                |
| սեղմիրան                                                        | 269                                            | 115            | 26                                         | 14                |
| աղեկապ (բանդաժ)                                                 | 94                                             | 26             | -                                          | -                 |
| ապարատ                                                          | 9                                              | 4              | -                                          | -                 |
| այլ                                                             | 451                                            | 116            | 22                                         | 10                |
| վերականգնողական տեխնիկական միջոցներ                             | 7,905                                          | 3,803          | 591                                        | 229               |
| այդ թվում՝                                                      |                                                |                |                                            |                   |
| ձեռնափայտ                                                       | 1,085                                          | 481            | 4                                          | 2                 |
| հենակ                                                           | 857                                            | 264            | 11                                         | 2                 |
| քայլակ                                                          | 652                                            | 366            | 97                                         | 34                |
| սայլակ                                                          | 2,070                                          | 868            | 237                                        | 88                |
| սուպինատոր                                                      | 53                                             | 31             | 14                                         | 7                 |
| լսողական սարք                                                   | 1,570                                          | 777            | 207                                        | 87                |
| կրծքագեղձի պրոթեզ                                               | 761                                            | 760            | -                                          | -                 |
| աչքի պրոթեզ                                                     | 615                                            | 213            | 18                                         | 7                 |
| ձայնաստեղծ սարք                                                 | 191                                            | 11             | -                                          | -                 |
| այլ                                                             | 51                                             | 32             | 3                                          | 2                 |
| <b>Մասնագիտական վերականգնում</b>                                | <b>86,656</b>                                  | <b>44,774</b>  | <b>905</b>                                 | <b>222</b>        |
| այդ թվում՝                                                      |                                                |                |                                            |                   |
| մասնագիտական կողմնորոշում և խորհրդատվություն, վերամասնագիտացում | 3,447                                          | 1,711          | 193                                        | 55                |
| մասնագիտական ուսուցում ԲՈՒՀ-ում                                 | 504                                            | 175            | 8                                          | 1                 |

|                                                                                       | Հաշմանդամություն ունեցող անձանց ընդհանուր թիվը |                | նրանցից հաշմանդամություն ունեցող երեխաները |                   |
|---------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------|----------------|--------------------------------------------|-------------------|
|                                                                                       | Ընդամենը                                       | նրանցից կանայք | Ընդամենը                                   | նրանցից աղջիկները |
| մասնագիտական ուսուցում միջին մասնագիտական հաստատությունում                            | 138                                            | 42             | 49                                         | 13                |
| եզրակացություն աշխատանքի պայմանների և բնույթի վերաբերյալ (աշխատանքային երաշխավորագիր) | 30,142                                         | 15,689         | 37                                         | 11                |
| այլ միջոցներ                                                                          | 52,425                                         | 27,157         | 618                                        | 142               |
| <b>Սոցիալական վերականգնում</b>                                                        | <b>109,890</b>                                 | <b>55,829</b>  | <b>5,821</b>                               | <b>1,850</b>      |
| այդ թվում՝                                                                            |                                                |                |                                            |                   |
| սոցիալ-կենցաղային հարմարեցում                                                         | 6,100                                          | 3,199          | 305                                        | 85                |
| սոցիալ-միջավայրային հարմարեցում                                                       | 103,790                                        | 52,630         | 5,516                                      | 1,765             |
| այդ թվում՝                                                                            |                                                |                |                                            |                   |
| խնամք                                                                                 | 2,300                                          | 948            | 532                                        | 185               |
| տնային սպասարկում                                                                     | 676                                            | 302            | 59                                         | 19                |
| սպասարկում տուն-ինտերնատում                                                           | 262                                            | 116            | 73                                         | 27                |
| սոցիալ-հոգեբանական վերականգնում                                                       | 85,258                                         | 43,969         | 3,241                                      | 1,051             |
| սոցիալ-իրավական խորհրդատվություն                                                      | 15,267                                         | 7,279          | 1,599                                      | 475               |
| Բրայլի համակարգով ուսուցում                                                           | 14                                             | 7              | 1                                          | 1                 |
| սուրդթարգմանությամբ ուսուցում                                                         | 13                                             | 9              | 11                                         | 7                 |
| <b>Ընդամենը</b>                                                                       | <b>409,171</b>                                 | <b>203,771</b> | <b>15,308</b>                              | <b>4,854</b>      |

Աղբյուրը. «ՀՀ սոցիալական վիճակը 2016 թ.-ին», ՀՀ ԱՎԾ, 2017 թ.

[http://www.armstat.am/file/article/soc\\_2016\\_11.pdf](http://www.armstat.am/file/article/soc_2016_11.pdf)

Այդուհանդերձ, ՎԱԾ-ի միջոցով առաջարկվող ծառայությունների ցանկից պարզ չէ, թե հաշմանդամություն ունեցող երեխաներն ինչ տեսակի ծառայություններ են ստացել, որն է անհրաժեշտ ծառայությունների, առաջարկված ծառայությունների և իրականում ստացած ծառայությունների միջև առկա տարբերությունը:

### 3. Երեխաների հաշմանդամության կարգավիճակի վերաբերյալ տվյալների ներկայացման սահմանափակումները

Հաշմանդամության կարգավիճակ սահմանող պետական գերատեսչությունը ՀՀ ԱՍՀՆ Բժշկասոցիալական փորձաքննության գործակալությունն է (ԲՄՓԳ): Հաշմանդամության կարգավիճակը տրվում է՝ հիմք ընդունելով անձի առողջական վիճակի մասին ստացած տեղեկատվությունը և բժշկասոցիալական փորձաքննության մարզային հանձնաժողովների (ԲՄՓՀ) կողմից անձի անհատական զննության արդյունքները:

Ամեն տարի բժշկասոցիալական փորձաքննություն է անցնում մոտ 70.000 մարդ՝ որոնց մոտ 4-5%-ը երեխաներ են: Աղյուսակ 11-ում ներկայացված են 2016 թ. բժշկասոցիալական փորձաքննության արդյունքները:

**Աղյուսակ 10. 2016 թ. բժշկասոցիալական փորձաքննության արդյունքները**

|                                                  |                                       |                                     |        |        |
|--------------------------------------------------|---------------------------------------|-------------------------------------|--------|--------|
| Փորձաքննվածների թվաքանակը, մարդ                  |                                       | ընդամենը                            | 71,176 | 100.0% |
|                                                  |                                       | նրանցից՝ մինչև 18 տարեկան           | 3,244  | 4.6%   |
| Նրանցից                                          | ընդամենը<br>նրանցից՝ մինչև 18 տարեկան | Ընդամենը                            | 18,063 | 100.0% |
|                                                  |                                       | Ներառյալ մինչև 18 տարեկան երեխաները | 1,330  | 7.4%   |
|                                                  | ընդամենը                              | Ընդամենը                            | 53,425 | 100.0% |
|                                                  |                                       | Ներառյալ մինչև 18 տարեկան երեխաները | 1,909  | 3.6%   |
| Հաշմանդամ ճանաչվածների ընդհանուր թվաքանակը, մարդ |                                       |                                     | 67,801 | 95.3%  |

Աղբյուրը. «ՀՀ սոցիալական վիճակը 2016 թ. -ին», ՀՀ ԱՎԾ, 2017 թ.

Բժշկասոցիալական փորձաքննություն անցած անձանց մոտ 95%-ն ստանում է հաշմանդամության կարգավիճակ: Առաջին անգամ դիմողների շրջանում հաշմանդամ ճանաչված անձանց թվաքանակը փոքր է. 1016 մարդ կամ ընդհանուրի միայն 89%-ը: Երեխաների շրջանում այդ համամասնությունը կազմում է 88%:

ԲՄՓԳ-ն հանգամանալի տեղեկատվություն է տրամադրում նաև հաշմանդամության պատճառների մասին՝ ներկայացնելով հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում երեխաներին ըստ հիվանդության տեսակների, որոնք հանդիսացել են հաշմանդամության առաջնային պատճառ: Աղյուսակ 12-ում բերված է 2016 թ-ին հաշմանդամ ճանաչված 0-18 տարեկան երեխաների թվաքանակն ըստ սեռի և հաշմանդամության պատճառի:

**Աղյուսակ 11. Հաշմանդամ ճանաչված երեխաների թվաքանակն ըստ հիվանդությունների և ըստ սեռի, 2016թ.**

|                                                                  | Ընդամենը     | նրանցից    |              | % - ն<br>ընդհանուրի<br>մեջ | Այդ թվում    |              | Այդ թվում |           |
|------------------------------------------------------------------|--------------|------------|--------------|----------------------------|--------------|--------------|-----------|-----------|
|                                                                  |              | աղջիկներ   | տղաներ       |                            | աղջիկներ     | տղաներ       | քաղաքային | գյուղային |
| Արյան շրջանառության համակարգի հիվանդություններ                   | 67           | 23         | 44           | 0.8%                       | 0.9%         | 0.8%         | 39        | 28        |
| Նորագոյացություններ                                              | 196          | 78         | 118          | 2.4%                       | 3.0%         | 2.1%         | 120       | 76        |
| <b>Նյարդային համակարգի հիվանդություններ</b>                      | <b>2,264</b> | <b>768</b> | <b>1,496</b> | <b>27.7%</b>               | <b>29.6%</b> | <b>26.8%</b> | 1,325     | 939       |
| <b>Հոգեկան և վարքի խանգարումներ</b>                              | <b>1,969</b> | <b>503</b> | <b>1,466</b> | <b>24.1%</b>               | <b>19.4%</b> | <b>26.3%</b> | 1,363     | 606       |
| Վնասվածքներ (բոլոր տեղեկությունները)                             | 132          | 35         | 97           | 1.6%                       | 1.3%         | 1.7%         | 71        | 61        |
| Շնչառական օրգանների հիվանդություններ                             | 127          | 14         | 113          | 1.6%                       | 0.5%         | 2.0%         | 79        | 48        |
| Տուբերկուլոզ                                                     | 45           | 19         | 26           | 0.6%                       | 0.7%         | 0.5%         | 27        | 18        |
| Մարսողական օրգանների հիվանդություններ                            | 47           | 9          | 38           | 0.6%                       | 0.3%         | 0.7%         | 27        | 20        |
|                                                                  | 191          | 67         | 124          | 2.3%                       | 2.6%         | 2.2%         | 112       | 79        |
| Ոսկրամկանային համակարգի և շարակցական հյուսվածքի հիվանդություններ | 466          | 193        | 273          | 5.7%                       | 7.4%         | 4.9%         | 318       | 148       |
| Էնդոքրին համակարգի հիվանդություններ                              | 485          | 136        | 349          | 5.9%                       | 5.2%         | 6.3%         | 283       | 202       |
| Աչքի հիվանդություններ                                            | 479          | 191        | 288          | 5.9%                       | 7.4%         | 5.2%         | 317       | 162       |
| Ականջի և պտկաձև ելունի հիվանդություններ                          | 87           | 19         | 68           | 1.1%                       | 0.7%         | 1.2%         | 55        | 32        |
| Միզասեռական համակարգի հիվանդություններ                           | 1,361        | 492        | 869          | 16.6%                      | 18.9%        | 15.6%        | 845       | 516       |
| <b>Բնածին անկանոնություններ</b>                                  | 261          | 51         | 210          | 3.2%                       | 2.0%         | 3.8%         | 141       | 120       |

|                                                  | Ընդամենը | նրանցից  |        | % -ն ընդհանուրի մեջ | Այդ թվում |        | Այդ թվում |           |
|--------------------------------------------------|----------|----------|--------|---------------------|-----------|--------|-----------|-----------|
|                                                  |          | աղջիկներ | տղաներ |                     | աղջիկներ  | տղաներ | քաղաքային | գյուղային |
| (զարգացման արատներ), ձևախախտումային խանգարումներ |          |          |        |                     |           |        |           |           |
| Այլ հիվանդություններ                             | 8,177    | 2,598    | 5,579  | 100.0%              | 100.0%    | 100.0% | 5,122     | 3055      |

Աղբյուրը. «ՀՀ սոցիալական վիճակը 2016 թ.-ին», ՀՀ ԱՎԾ, 2017 թ.

Թեև ԲՄՓԳ-ն ու ՀՀ ԱՆ-ն կիրառում են ԱՀԿ հիվանդությունների միջազգային դասակարգիչը՝ ՀՄԴ 10-ը, ՀՀ ԱՎԾ միևնույն վիճակագրական պարբերականում հրատարակված երկու գերատեսչությունների տվյալները հնարավորություն չեն տալիս համեմատելու առողջապահության ոլորտում ախտորոշված երեխաների թիվը այն երեխաների թվաքանակի հետ, որոնք անցել են բժշկասոցիալական փորձաքննություն և ստացել հաշմանդամության կարգավիճակ: Բացի այդ, ըստ տարիքային խմբերի երեխաների դասակարգման համար կիրառվող տարբեր մոտեցումները նույնպես թույլ չեն տալիս համեմատություններ կատարելու. առողջապահական ոլորտում երեխաները դասակարգված են ըստ երեք տարիքային խմբերի՝ 1-14 տարեկան, 15 տարեկան և 16-17 տարեկան, իսկ ԲՄՓԳ տվյալներում հաշմանդամություն ունեցող երեխաների համար կա միայն մեկ խումբ՝ «մինչև 18 տարեկան»: ԲՄՓԳ տվյալներից անհնար է նաև հասկանալ, թե այդ երեխաներն ինչ տեսակի հաշմանդամություն ունեն:

ԱՀԿ ՖՄԴ-ի հենքով հաշմանդամության գնահատման մոտեցումը և էլ-հաշմանդամության SS համակարգի ներդրումը հնարավոր կդարձնեն բոլոր ոլորտներից ավելի համադրելի և շարունակական տվյալների ստացումը:

Հաշմանդամություն ունեցող երեխաների թվաքանակն ըստ մարզերի ցույց է տալիս, որ հաշմանդամություն ունեցող երեխաների մեկ երրորդը Երևանից է, և յուրաքանչյուր 10-րդ երեխա կա՛մ Արարատից է, կա՛մ Լոռու ու Շիրակի մարզերից: Բոլոր մարզերում աղջիկների ու տղաների համամասնությունը նույնն է. հաշմանդամությունը գերակշռում է տղաների մոտ:

**Աղյուսակ 13. Հաշմանդամություն ունեցող երեխաների թվաքանակն ըստ մարզերի ու սեռի. 2016 թ.**

|           | ՀՈՒԵ-ների թիվը | %-ը ընդհանուրի մեջ | Աղջիկների թիվը | Տղաների թիվը |
|-----------|----------------|--------------------|----------------|--------------|
| Երևան     | 2,298          | 28%                | 724            | 1,574        |
| Արագածոտն | 383            | 5%                 | 117            | 266          |
| Արարատ    | 902            | 11%                | 263            | 639          |

|                 | ՀՈՒՇ-ների<br>թիվը | %-ը<br>ընդհանուրի<br>մեջ | Աղջիկների<br>թիվը | Տղաների թիվը |
|-----------------|-------------------|--------------------------|-------------------|--------------|
| Արմավիր         | 714               | 9%                       | 232               | 482          |
| Գեղարքունիք     | 681               | 8%                       | 194               | 487          |
| Լոռի            | 809               | 10%                      | 265               | 544          |
| Կոտայք          | 723               | 9%                       | 241               | 482          |
| Շիրակ           | 798               | 10%                      | 266               | 532          |
| Սյունիք         | 419               | 5%                       | 156               | 263          |
| Վայոց ձոր       | 122               | 1%                       | 34                | 88           |
| Տավուշ          | 328               | 4%                       | 106               | 222          |
| <b>Ընդամենը</b> | <b>8,177</b>      | <b>100%</b>              | <b>2,598</b>      | <b>5,579</b> |

Աղբյուրը. «ՀՀ սոցիալական վիճակը 2016 թ.-ին», ՀՀ ԱՎԾ, 2017 թ.

Բժշկասոցիալական փորձաքննությունից հետո ԲՄՓԳ հանձնաժողովներն առաջարկում են վերականգնողական որոշ ծառայություններ՝ վերականգնողական անհատական պլաններում: ՎԱԾ-ներում առաջարկված ծառայությունների տեսակը, հաճախականությունը, ներառյալ վերականգնողական պարագաներն ու օժանդակ սարքերը և դրանց ֆինանսավորման մեխանիզմները սահմանվում են կառավարության որոշումներով (ՀՀ կառավարության 2017 թ. սեպտեմբերի 7-ի և 2015 թ. սեպտեմբերի 10-ի որոշումներ):

2016 թ.-ին ՀՀ ԱՍՀՆ-ը երեխաների համար առանձին ԲՄՓՀ ստեղծեց: Դա կատարվեց միջգերատեսչական աշխատանքային խմբի առաջարկների հիման վրա<sup>23</sup>, որը համակարգում էր ԱՀԿ ՖՄԴ հիման վրա հաշմանդամության սահմանման գործիքների ու ընթացակարգերի փորձարկումը: Հաշմանդամություն ունեցող երեխաների ու նրանց ծնողների հետ սովորական ԲՄՓՀ-ի անդամների հաղորդակցվելու հմտությունների պակասը և փորձաքննության ընթացքում նրանց հետ շփվելու անընդունելի մոտեցումների մասին աշխատանքային խմբի անդամների զեկույցները ՀՀ ԱՍՀՆ-ին դրդեցին հիմնելու մանկական բժշկասոցիալական փորձաքննության համար մասնագիտացված ԲՄՓՀ: Սակայն նոր ԲՄՓՀ-ի աշխատանքային միջավայրը, մասնագետների որակավորումն ու կիրառած մեթոդները առանձնապես չեն փոփոխվել և լուրջ ուշադրության ու բարելավման կարիք ունեն: Սա առաջնային հարցերից է, որը բարեփոխումների իրականացման փուլում պետք է պատշաճ լուծում ստանա:

<sup>23</sup> Աշխատանքային խումբը ձևավորվել է ՀՀ ԱՍՀՆ նախարարի 2014 թ. փետրվարի հրամանով: Ան կազմի մեջ մտնում էին ՀՀ ԱՍՀՆ հաշմանդամության հարցերի բաժնի, ԲՄՓՀ, ՄԱԶԾ, ՅՈՒՆԻՄԵՖ, ԱՄՆ ՄԶԳ Կենսաթոշակային բարեփոխումների իրականացման ծրագրի, ԱՆ-ի և ԿԳՆ-ի, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները: Աշխատանքային խումբը համակարգում էր հաշմանդամության հարցերով պատասխանատու փոխնախարարը:

#### 4. Հաշմանդամության սահմանման նոր ընթացակարգին աջակցելու նպատակով ՀՀ ԿԳՆ և ՀՀ ԱՍՀՆ միջև տվյալների փոխանակման համար պահանջվող մեխանիզմները

*«Հաշմանդամություն ունեցող երեխաների շատ զրկանքներ հիմնականում առաջանում ու տևական բնույթ են կրում նրանց անտեսանելիության պատճառով: Առանցքային նախարարություններում հաշմանդամություն ունեցող երեխաների մասին տվյալների հավաքագրման արդյունքվետության բարձրացումն ու ներդաշնակեցումը կնպաստեն հաղթահարելու նրանց անտեսվածությունն ու նրնաց նկատմամբ խտրականությունը, կնպատակաուղղեն ռեսուրսներն ու անհրաժեշտ միջամտությունները և կբարձրացնեն դրանք արդյունավետությունը» (Մշխարհի երեխաների վիճակը 2013 թ., Հաշմանդամություն ունեցող երեխաներ):*

Հաշմանդամություն ունեցող երեխաների մասին առկա պաշտոնական վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հաշմանդամություն ունեցող երեխաների կողմից առողջապահական ու կրթական ծառայություններից օգտվելու մասին տեղեկատվությունը թերի է. ՀՀ ԱՍՀՆ տվյալները ներկայացնում են միայն ԲՄՓՀ-ի կողմից երաշխավորած այն ծառայությունները, որոնք մատուցվում են միայն ՀՀ ԱՍՀՆ համակարգում: ՀՀ ԿԳՆ-ն չի տրամադրում տեղեկատվություն նախադպրոցական ուսումնական հաստատություններում, ինչպես նաև հանրակրթական դպրոցներում հաշմանդամություն ունեցող երեխաների թվաքանակի մասին: Գոյություն չունեն նաև տվյալներ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թվաքանակի մասին և ինչ ծառայություններ են ստանում այդ երեխաները կրթության ոլորտում:


Հաշմանդամության գնահատման և սահմանման առաջարկվող նոր ընթացակարգի նախագծի համաձայն, նոր մշակված էլ-հաշմանդամություն SS համակարգը տեղեկատվություն է ստանալու անմիջապես էլ-առողջապահություն SS համակարգից՝ հատուկ բժշկական ձևաթղթի միջոցով (որը կոչվում է Օգտաբարտ), որը լրացվելու է այն առողջապահական հիմնարկի կողմից, որտեղ անձը բուժում է ստացել կամ կատարել է բժշկական հետազոտություններ:

Հաշմանդամության սահմանման համար դիմած անձի բժշկական փորձաքննությունն իրականացվելու է առողջապահական համակարգից ստացվող տվյալների, այդ թվում և կլինիկական ու լաբորատոր թեստերի, կարևոր հետազոտությունների, ախտորոշիչ, թերապևտիկ ու վերականգնողական ծառայությունների արդյունքների մասին տվյալների հիման վրա:

Նախատեսվում է, որ **առողջական վիճակի** մասին տեղեկատվությունը տրամադրվելու է կա՛մ ԱՀԿ ՖՄԴ կոդերի (**s-մարմնի կառուցվածք և b-օրգանիզմի ֆունկցիաներ**) միջոցով՝ որակիչներով, կա՛մ համակարգն ավտոմատ կերպով ՀՄԴ-

10 կողերը փոխարկելու է ՀՄԴ կողերի: Այդ գործողությունները ներկայումս գտնվում են ՀՀ ԱՆ և ՀՀ ԱՍՀՆ ՏՏ մասնագետների միջև քննարկումների փուլում:

**Գործունեության և մասնակցության ու միջավայրի գործոնների** մասին տեղեկատվությունն ակնկալվում է ստանալ սոցիալական աշխատողների միջոցով՝ նրանց կողմից տնային այցելությունների և շահառուի հետ անմիջական շփման արդյունքում: Սոցիալական աջակցության տարածքային կենտրոնների/բաժինների սոցիալական աշխատողները/դեպք վարողները հավաքագրելու են մեծահասակների մասին պահանջվող տեղեկությունները: Երեխաների դեպքում ընթացակարգը պետք է տարբեր լինի: Վերլուծելով ՀՀ ԱՎԾ «ՀՀ սոցիալական վիճակը» տարեկան զեկույցի տվյալները (հիմնականում հետևյալ բաժինները. 2-Հանրակրթական հաստատությունների գործունեությունը, 11-Հաշվառված հաշմանդամներ և բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների գործունեություն, 15-Մանկատների գործունեություն, 17-Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների գործունեություն)՝ մենք եզրակացնում ենք, որ հաշմանդամություն ունեցող երեխաների մոտ 28%-ը հատուկ դպրոցներում են, մոտ 6%-ը՝ մանկատներում կամ գիշերօթիկ հաստատություններում, և 66%-ն ապրում է ընտանիքների հետ (կենսաբանական, ընդլայնված կամ այլ):



Գծապատկեր 8. Հաշմանդամություն ունեցող երեխաների բաշխումն ըստ բնակվելու վայրի

*Աղբյուրը. Հեղինակների հաշվարկները՝ հիմնված ՀՀ ԱՎԾ «ՀՀ սոցիալական վիճակը 2016 թ.-ին» տարեկան հրապարակման վրա*

Հաշմանդամության գնահատման համակարգի բարեփոխումներին զուգընթաց Հայաստանի կառավարությունն իրականացնում է երեխաների խնամքի ու պաշտպանության, ինչպես նաև կրթական համակարգերի բարեփոխումներ. ոլորտներ, որոնք անմիջապես առնչվում են նաև հաշմանդամություն ունեցող

երեխաներին: Համայնքային սոցիալական աշխատողների կողմից պետք է գնահատվեն այն երեխաների կարիքները, գործունեությունն ու մասնակցությունը և նրանց լիարժեք ներառման խոչընդոտները, ովքեր բարեփոխումների արդյունքում շուրջօրյա խնամքի հաստատություններից տեղափոխվել են ցերեկային խնամքի կենտրոններ: Մինևոյն ժամանակ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը, ներառյալ հանրակրթական դպրոցում/նախակրթարանում երեխայի լիարժեք գործունեության և մասնակցության խոչընդոտները, ենթակա են դպրոցի/նախակրթարանի մասնագետների և/կամ ՄՀԱՏԿ անձնակազմի մանրակրկիտ գնահատման: Շատ կարևոր է փոխկապակցված կամ ինտեգրված ՏՏ համակարգի առկայությունը, որը ԲՄՓԳ-ին թույլ կտա երեխայի գործունեության ու մասնակցության մասին առկա այդ տեղեկատվությունը ստանալ, երբ հաշմանդամության կարգավիճակի համար երեխան անցնում է բժշկասոցիալական փորձաքննություն:

Ինչպես վերը նշվեց, ԱՀԿ ՖՄԴ դասակարգումը ենթադրում է ընդհանուր լեզու երբ խոսքը գնում է գնահատման չորս բաղադրիչների («s-մարմնի կառուցվածք», «b-օրգանիզմի ֆունկցիաներ», «d-գործունեություն և մասնակցություն» և «e-միջավայրային գործոններ») վերաբերյալ տեղեկատվության փոխանակման մասին: s-մարմնի կառուցվածք և b-օրգանիզմի ֆունկցիաներ բաղադրիչների վերաբերյալ տվյալները պետք է ստացվեն էլ-առողջապահություն տեղեկատվական համակարգից, և այդ հարցի կարգավորումն ընթացքում է: Սակայն «d-գործունեություն և մասնակցություն» և «e-միջավայրային գործոններ» բաղադրիչների մասին տեղեկատվության ստացման հարցը դեռևս սպասում է լուծման:

Հաշմանդամություն ունեցող երեխաների մասին տվյալների ստացման ժամանակ, կարծում ենք, կարևոր է պահպանել հետևյալ սկզբունքները.

- երեխային գնահատել իր միջավայրում,
- խուսափել երեխայի մասին կրկնվող տեղեկություն հավաքագրելուց,
- կանխել պետական տարբեր կառույցների կողմից երեխաներին մի քանի անգամ գնահատման ենթարկելը,
- ապահովել և պահանջել երեխայի մասին անհատական տվյալների բարձր ապահովություն/խիստ գաղտնիություն:

Թե՛ ՀՀ ԱՍՀՆ-ը և թե՛ ՀՀ ԿԳՆ-ն ունեն հաշմանդամություն ունեցող երեխաների գնահատման իրենց սեփական ընթացակարգերը, որի արդյունքում նրանք միաժամանակ գրեթե համանման տեղեկատվություն են ստանում երեխայի մասին: Հաշմանդամության կարգավիճակ ստանալու համար երեխան պետք է անցնի որոշակի բժշկական հետազոտություններ և բժշկասոցիալական փորձաքննություն: Հաշմանդամության գնահատման ՀՀ ԱՍՀՆ ընթացակարգի նախագծի համաձայն, անհրաժեշտ է տեղեկատվություն ստանալ հետևյալ անձի ֆունկցիոնալության հետևյալ ոլորտների վերաբերյալ.

1. ինքնասպասարկում,
2. շարժունակություն,
3. կողմնորոշման ունակություն,
4. հաղորդակցություն,
5. ինքնատիրապետում, վարք,
6. սովորելու ունակություն,
7. 16+ տարեկանների համար՝ աշխատելու կարողություն, իսկ երեխաների համար՝ խաղալու ունակություն:

Գործունեության ու մասնակցության, կատարողականի սահմանափակումները գնահատվում են ծանրության չորս մակարդակներով. թեթև, միջին, ծանր և խորը:

Գնահատման արդյունքների հիման վրա ԲՄՓՀ լրացնում է անձի համար վերականգնողական անհատական ծառայությունների ծրագիրը, որով անձի համար երաշխավորվում է՝ նրա վերականգնմանը հարմար ծառայություններ:

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թ. ապրիլի 13-ի թիվ 370-Ա/2 հրամանով սահմանված են երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի և/կամ մանկավարժահոգեբանական աջակցության կարիքի գնահատման համար երեխաների մասին տեղեկատվության ստացման հետևյալ ընթացակարգը:

- Գնահատման առաջին մակարդակ. կատարվում է դպրոցում, ուսուցիչների, հատուկ մանկավարժների և բազմամասնագիտական թիմի կողմից՝ դիտարկումների և ծնողների/խնամակալների հետ հարցազրույցների միջոցով:
- Գնահատման երկրորդ մակարդակ. դպրոցի պահանջով, իրականացվում է ՄՀՄՏԿ կողմից: Այս գնահատման ընթացքում ՄՀՄՏԿ մասնագետներն այցելում են դպրոց և գնահատում են երեխաներին իրենց սովորական միջավայրում՝ դիտարկումների, անհատական թեստերի ու խաղի հիման վրա կազմակերպվող գնահատման միջոցով:

Գնահատման երկրորդ մակարդակի համար հարկավոր է առնվազն մեկ շաբաթ. Որի ընթացքում դպրոցում կատարվում են դիտարկումներ, կազմակերպվում են դասավանդող անձնակազմի ու ծնողների հետ հարցազրույցներ և երեխայի ուսուցիչների կատարած դիտարկումների արդյունքների վերլուծություն: Հրամանով հաստատվում է, որ գնահատման երկրորդ մակարդակը նպատակ ունի «որոշելու երեխայի մոտ այս կամ այն ֆունկցիայի խանգարման աստիճանը և դրանով (կամ դրանցով) պայմանավորված՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը»<sup>24</sup>: Սակայն օրգանիզմի ֆունկցիայի խանգարումները գնահատել կարող են միայն առողջապահական հիմնարկները: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման ժամանակ սահմանվում է

<sup>24</sup> Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը. ՀՀ ԿԳՆ նախարարի 2017 թ. ապրիլի 13-ի հրամանի 40-րդ կետը:

երեխայի ֆունկցիոնալության սահմանափակումները, որոնք առնչվում են գործունեության և մասնակցության հետ և պայմանավորված են միջավայրային գործոնների ազդեցությամբ: Հետևաբար, այդ կետի ձևակերպումը պետք է վերանայվի:

Գնահատման երկրորդ մակարդակի արդյունքներն ամփոփվում են արձանագրության մեջ, որտեղ թվարկված հետևյալ ֆունկցիաներից որևէ մեկի համար նշվում է ֆունկցիայի խանգարման ծանրության չորս աստիճաններից (թեթև, միջին, ծանր և խորը) մեկը.

1. ձայնի և խոսքի ֆունկցիա,
2. լսողական ֆունկցիա,
3. տեսողական ֆունկցիա,
4. իտելլեկտուալ/մտավոր ֆունկցիա,
5. շարժունակության ֆունկցիա:

Եթե ծնողները համաձայն չեն գնահատման երկրորդ մակարդակի արդյունքներին, նրանք կարող են դիմել ՀՄՀԿ, ինչը երրորդ մակարդակն է: Այդ դեպքում, երեխան կարող է գնահատման ևս մեկ շրջան անցնել:

Դպրոցական ու նախադպրոցական մասնագետների կողմից մշակվում են ուսումնական և/կամ զարգացման անհատական պլաններ, որտեղ հանգամանորեն նշվում է քայլերի ու գործողությունների ցանկը, որոնք անհրաժեշտ են երեխայի ուսմանն աջակցելու և դպրոցական/նախադպրոցական միջավայրում նրա մասնակցությունը խթանելու համար:

Երկու ընթացակարգերն իրար շատ նման են, և երեխայի գործունեության ու մասնակցության մասին հավաքագրվում են շատ նման տեղեկատվություն: Հետևաբար, հիմնական առաջարկը կլինի խուսափել կրկնվող տեղեկատվության հավաքագրումից և ստեղծել կրթական ոլորտից սոցիալական պաշտպանության ոլորտ և հակառակը տեղեկատվության ավտոմատ փոխանցման SS պատշաճ լուծումներ:

Միննույն ժամանակ, տվյալների փոխանակման մեխանիզմը պետք է ներդաշնակեցվի երկու գերատեսչությունների միջև՝ ապահովելով երկու կողմերի համար փոխադարձ կարիքներին համապատասխան տեղեկատվության ստացումը: Ծրագրի հիմնական գործողություններից մեկը կլինի խթանել ՀՀ ԿԳՆ և ՀՀ ԱՍՀՆ միջև երկխոսությունը՝ ապահովելու երեխաների ֆունկցիոնալ սահմանափակումների մասին հավաքագրված տեղեկատվության ներդաշնակեցումը և, մեկ ընդհանուր լեզվի ու մոտեցումների կիրառումը՝ տվյալների փոխադարձ փոխանակման մեխանիզմ ստեղծելու համար:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի գործունեության ու մասնակցության դիտարկման և դրա մասին տվյալներ հավաքելու համար ՄՀԱՏԿ մասնագետները ծախսում են գրեթե մեկ շաբաթ: Նրանք

կարող են ավելի ճշգրիտ լինել երեխայի կարիքների ու նրան խոչընդոտող միջավայրային գործոնների մասին իրենց եզրակացություններում: Տուն այցելած ԲՄՓՀ մասնագետի կամ սոցիալական աշխատողի հետ երեխայի մեկ հանդիպումը չի կարող ապահովել երեխայի մասին ստացված տեղեկատվության ճշգրտությունը, քանի որ այն կլինի կողմնակալ և ոչ բազմակողմանի: Բացի այդ, որոշ առողջական խնդիրների դեպքում երեխայի հետ հաղորդակցվելու համար անհրաժեշտ են հատուկ հմտություններ ու մոտեցում, իսկ սոցիալական աշխատողները չունեն այդ հմտությունը: Այնպիսի մեխանիզմի ստեղծումը, որը կնպաստի ՄՀԱՏԿ-ից ԲՄՓՀ տեղեկատվության սահուն փոխանցում՝ առանց հավելյալ ծախսերի և ԱՀԿ ՖՄԴ կողմից առաջարկվող ընդհանուր լեզվի գործածմամբ, իրագործելի լուծում է, որը կքննարկվի և կփորձարկվի ծրագրի ընթացքում:

## 5. Առաջարկություններ

Հաշմանդամություն ունեցող անձանց, ներառյալ երեխաների մասին որակյալ տվյալները վճռորոշ են անհրաժեշտ ծառայությունների գիտակ պլանավորման ու բյուջետավորման և կառավարության միջազգային պարտավորությունների կատարման համար: Հաշմանդամություն ունեցող երեխաների վերաբերյալ տվյալների առկայության, անհրաժեշտ տվյալների բացի և միջոլորտային տեղեկատվության փոխանակման վերաբերյալ սույն վերլուծության նպատակը հաշմանդամություն ունեցող երեխաների մասին սոցիալական, առողջապահության ու կրթության ոլորտներում հանրայնորեն մատչելի տվյալների փաստագրումն էր, այդ տեղեկատվության համադրելիության ու փոխկապակցվածության գնահատումը և առանցքային նախարարությունների միջև տվյալների ստացման, փոխանակման և ներդաշնակեցման բարելավումը՝ որպես ծրագրի ընթացքում շարունակական գործողություն:

**Տվյալների մատչելիություն.** Հետազոտությունը ցույց տվեց, որ հաշմանդամություն ունեցող երեխաների մասին տեղեկատվության միակ աղբյուրը ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պարբերական հրապարակումներն են, հիմնականում՝ «ՀՀ սոցիալական վիճակը» վերնագրով տարեկան վիճակագրական զեկույցները: ՀՀ ԱՎԾ հրապարակած տվյալները ստացվում են ՀՀ ԱՍՀՆ, ԱՆ և ԿԳՆ վարչական աղբյուրներից, ինչպես նաև ուղղակիորեն կրթական, առողջապահական ու սոցիալական ծառայություններ մատուցողներից: Սակայն հետազոտությամբ պարզվեց, որ ՀՀ ԱՎԾ հրապարակած տվյալները նախադպրոցական հաստատություններում հաշմանդամություն ունեցող երեխաների մասին որևէ տեղեկատվություն չեն պարունակում, տվյալներ չկան նաև հանրակրթական դպրոցներում հաշմանդամություն ունեցող երեխաների մասին: Թեև կան որոշ տվյալներ հատուկ դպրոցներում աշակերտների թվաքանակի մասին, տվյալները առկա են միայն ըստ հատուկ դպրոցների

տեսակների և չեն պարունակում որևէ տեղեկատվություն ըստ հաշմանդամության տեսակների: Տվյալներ չկան հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մասին՝ ո՛չ ընդհանուր տվյալներ, ո՛չ ըստ ֆունկցիոնալության սահմանափակման տեսակների: Սա լուրջ բացթողում է, որը պետք է լրացնեն առանցքային նախարարությունները:

Հաշմանդամություն ունեցող երեխաների մասին տվյալները խիստ սահմանափակ են նաև սոցիալական պաշտպանության ոլորտում. տվյալներ չկան հաշմանդամություն ունեցող երեխաներին տրամադրվող կամ նրանց կողմից ստացված ծառայությունների մասին, բացառությամբ ՀՀ ԱՍՀՆ տրամադրած պրոթեզաօրթոպեդիկ պարագաների և օժանդակ միջոցների մասին տեղեկատվությունից: Սակայն այդ տվյալները բաղդատված չեն ըստ երեխաների տարիքային խմբերի, չկան տվյալներ ըստ տարիքային խմբերի հաշմանդամություն ունեցող երեխաներին տրամադրված անգամ լսողական սարքերի ու սայլակների մասով: Տրամադրված սոցիալական ծառայությունների մասին տեղեկատվությունը նույնպես բաղդատված չէ ըստ երեխայի հաշմանդամության տեսակի, և ոչ մի հաշվետվություն հրապարակված կամ մատչելի չէ ՀՀ ԱՍՀՆ կողմից մատուցած ծառայությունների շրջանակի ու ծածկույթի մասին: Հարկավոր է, որ ՀՀ ԱՍՀՆ-ն վերանայի ու բարելավի վերականգնողական անհատական ծրագրերի միջոցով ստացվող տեղեկատվությունը և հնարավորություն ունենա փաստագրելու հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքներն ըստ տարիքային խմբերի՝ ծառայությունների ավելի լավ պլանավորման և թիրախավորված մատուցման համար: Ակնկալվում է, որ Էլ-հաշմանդամություն նոր SS համակարգը հնարավորություն կտա օգտագործել առկա տեղեկատվությունն ըստ տարբեր կտրվածքների:

Էլ-առողջապահություն SS համակարգը թույլ է տալիս երեխաների մասին ավելի հանգամանալի տվյալներ ստանալ և դասակարգել ըստ տարիքային խմբերի, սեռի ու բնակության վայրի: Հետևաբար առաջարկվում է սոցիալական պաշտպանության ու կրթության ոլորտներում բարելավել տվյալների ստացման և բաշխման մոտեցումներն առողջապահության ոլորտում տվյալների կառավարման ու վերլուծության լավագույն փորձի հիման վրա: Ապահովելով միևնույն մակարդակի ճշգրիտ ու դասակարգված տեղեկատվության կառավարումը սոցիալական պաշտպանության ու կրթության ոլորտներում հնարավոր կդարձնի հետևելու թե ինչպիսի ծառայություններ են ստանում «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող երեխաները, որքանով են նրանք ներառված կրթական համակարգում և այլն: Սակայն առողջապահության ոլորտի վիճակագրությունը ևս լրամշակման կարիք ունի. Ոչ մի տվյալ պաշտոնապես չի հրապարակվում 2005 թ.-ից ի վեր ՀՀ ԱՆ կողմից իրականացվող կանխարգելիչ սկրինինգների մասին ըստ տեսակների, ընդգրկվածության ու ծառայությունների: Դա կարևոր նախաձեռնություն է և պետք է այդ մասին պարբերաբար զեկուցվի առնվազն տարեկան մեկ անգամ:

**Դեզագրեզացվածության մակարդակ.** Նույնիսկ եթե տվյալներն առկա են, դրանք չունեն հարկ եղած բաղդատվածությունը, ինչը կարևոր է որոշումների կայացման համար: Առողջապահության ոլորտի տրամադրած տվյալները դեզագրեզացված այնպես, ինչպես դա արվում է սոցիալական պաշտպանության ոլորտում: Դա բարդություն է ստեղծում առկա տեղեկատվությունը համադրելիս, վերլուծելիս և տեղեկացված որոշումների կայացման համար միտումներն ու օրինաչափությունները բացահայտելիս:

Բացի այդ, առաջարկվում է, որ հաշմանդամության սահմանման համար ՀՀ ԱՍՀՆ և ԱՆ միջև տվյալների հետագա համադրումն ու ներդաշնակեցումը պատշաճորեն իրականացվեն՝ ապահովելու համար ֆունկցիոնալ սահմանափակումների մասին տվյալների միևնույն մանրամասնությամբ մատչելիությունը: Հետագա զարգացումների մեջ պետք է տեղ գտնի նոր մոդուլի ստեղծումը, որը կապահովի էլ-առողջապահություն SS համակարգի և էլ-հաշմանդամություն SS համակարգի միջև սահմանված տեղեկատվության փոխանակումը, ինչը դեռևս մշակվում է, և թույլ կտա հիվանդությունների ԱՀԿ ՀՄԴ կոդերը (հիվանդությունների միջազգային դասակարգում) վերածելու օրգանիզմի ֆունկցիաների և մարմնի կառուցվածքի ՖՄԴ կոդերի:

Ծրագրի թիմի հիմնական առաջարկություններից է **հաշմանդամություն ունեցող երեխաների մասին մեկ համապարփակ պարբերականի հրատարակումը**, որտեղ կարող են ներկայացվել վարչական տարբեր աղբյուրներից ստացված տվյալները: Պարբերաբար թարմացվող միասնական պարբերականը, որն իր կառուցվածքով պետք է հարմարավետ լինի ընթերցողի համար, հաշմանդամություն ունեցող երեխաների վերաբերյալ փոխկապակցված տեղեկատվություն կպարունակի քաղաքականություն մշակողների, որոշումներ կայացողների, իրագործողներին ու լայն հասարակայնության համար, և կօգնի գնահատելու, դիտարկելու և հետևելու, թե հաշմանդամություն ունեցող երեխաները առողջապահության, կրթության ու սոցիալական պաշտպանության ոլորտներում ինչ ծառայություններ են ստանում, արդյո՞ք նրանք ներառված են կրթական համակարգում, թե՞ ոչ, ստանո՞ւմ են արդյոք առողջապահական անհրաժեշտ ծառայությունները, ի՞նչ սոցիալական ծառայություններ են ստանում, և որ կարիքները չեն բավարարվում:

Հաշմանդամության սահմանման բնագավառում իրականացվող բարեփոխումներին զուգահեռ, ՀՀ կառավարությունը նախաձեռնել է երեխաների խնամքի ու պաշտպանության և կրթական համակարգերի հիմնարար բարեփոխումներ, որոնք խաչվում են, երբ խոսք է գնում հաշմանդամություն ունեցող երեխաների մասին. երեխաների կարիքները, այդ թվում նրանց գործունեությունն ու մասնակցությունը, ինչպես նաև նրանց լիակատար ներառմանը խոչընդոտող միջավայրային գործոնները պետք է գնահատվեն համայնքային սոցիալական աշխատողների/դեպք վարողների կողմից, երբ շուրջօրյա խնամքի հաստատությունների վերակազմավորման արդյունքում այդ

երեխաները դուրս են գալիս հաստատություններից և ծառայություններ պետք է ստանան ցերեկային խնամքի կենտրոններում: Միևնույն ժամանակ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը, այդ թվում հանրակրթական դպրոցում/նախադպրոցական հաստատությունում երեխայի լիակատար դրսևորմանը խոչընդոտող միջավայրային գործոնները ենթակա են հանգամանալի գնահատման դպրոցի/նախադպրոցական ուսումնական հաստատության մասնագետների կամ ՄՀԱՏԿ անձնակազմի կողմից: Խիստ կարևոր է փոխկապակցված կամ ինտեգրված ՏՏ համակարգ ունենալը, որը ԲՄՓԳ-ին թույլ կտա ստանալու երեխայի գործունեության ու մասնակցության վերաբերյալ առկա տեղեկատվությունը, երբ հաշմանդամության կարգավիճակի համար երեխան անցնում է բժշկասոցիալական փորձաքննություն: Անհատական ուսումնական և/կամ զարգացման ծրագրերը մշակվում են դպրոցի/նախադպրոցական ուսումնական հաստատության մասնագետների կողմից՝ առաջարկելով գործողությունների ու միջոցառումների մանրամասն ցանկ, որն անհրաժեշտ է՝ աջակցելու երեխային սովորելու հարցում և օժանդակելու դպրոցի/նախադպրոցական ուսումնական հաստատության միջավայրում նրա լիակատար մասնակցությանը: Երկու ընթացակարգերն իրար շատ նման են և շատ նման տեղեկատվություն են հավաքագրում երեխայի գործունեության ու մասնակցության վերաբերյալ, ուստիև հիմնական առաջարկությունն այն է, որ կանխվի նույն տեղեկատվության կրկնակի հավաքագրումը և ՏՏ համակարգի միջոցով պատշաճ լուծում առաջարկվի կրթության ոլորտից տեղեկատվության ավտոմատ փոխանցմանը սոցիալական պաշտպանության ոլորտ և հակառակը: Հաշմանդամություն ունեցող երեխաների մասին տեղեկատվություն հավաքագրելիս կարևոր է ընդհանուր լեզվի կիրառումը, որը կնպաստի հաշմանդամության սահմանման ժամանակ սոցիալական ու կրթության ոլորտներում երեխայի մասին տեղեկատվության փոխանակմանը, կանխելով կրկնվող տեղեկատվության հավաքագրումը:

Հաշմանդամություն ունեցող երեխաներին մատուցվող ծառայությունների քաղաքականությունն ու ծառայությունների տրամադրումը բարելավելու և զարգացնելու նպատակով առաջարկվում է սահմանել **ընդհանուր լեզու և մոտեցում՝ ԱՀԿ ՖՄԴ հիման վրա ՀՀ ԱՍՀՆ, ԿԳՆ ու ԱՆ միջև անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման համար**: Այնպիսի մեխանիզմի ստեղծումը, որը կնպաստի ՄՀԱՏԿ-ից ԲՄՓՀ տեղեկատվության սահուն փոխանցումը ԱՀԿ ՖՄԴ ընդհանուր լեզվի գործածմամբ և առանց հավելյալ ծախսերի, իրագործելի լուծում է, որը կքննարկվի և կփորձարկվի ծրագրի իրականացման ընթացքում:

Սոցիալական, առողջապահության ու կրթության ոլորտների միջև փոխկապակցված ՏՏ համակարգը կարող է միջգերատեսչական համագործակցության լավ հարթակ լինել՝ հաշմանդամություն ունեցող երեխաների վաղ հայտնաբերման, ծառայությունների պլանավորման և ժամանակին տրամադրման բարելավման համար, դառնալով համակարգված տվյալների

փոխանակման մեխանիզմ: Ինտեգրված լավ SS համակարգի առկայությունը կնպաստի բոլոր նախարարությունների մոնիթորինգի ու հաշվետվողականության համակարգի ստեղծմանը՝ նրանց տրամադրելով այն տվյալները, որոնք անհրաժեշտ են իրենց ընթացիկ գործունեությունն իրականացնելու և նպատակներին հասնելու համար:

Առանցքային երեք նախարարությունների որոշում կայացնողների ու մասնագետների համար աշխատաժողովի կազմակերպումը՝ համապատասխան SS լուծումների ու հավաքագրված տեղեկատվության հոսքի ներկայացմամբ կարող է բարձր մակարդակի համակարգված ու ներդաշնակիցված տեղեկատվության փոխանակման հարթակ ստեղծել՝ բարելավելու հաշմանդամություն ունեցող երեխաների մասին տեղեկատվության փոխանակումը՝ ԱՀԿ ՖՄԴ հիման վրա միասնական լեզվի օգտագործմամբ:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Human Rights Watch . (2017, March 1). *Human Rights Watch Submission on Armenia to the Committee on the Rights of Persons with Disabilities*. ստացված 2018 թ. հունվարի 3-ին՝ հետևյալ կայքէջից. [www.hrw.org](http://www.hrw.org): <https://www.hrw.org/news/2017/03/01/human-rights-watch-submission-armenia-committee-rights-persons-disabilities>
2. ՀՀ ԿԳՆ., *Ներառական կրթություն*, ստացված 2018 թ. հունվարի 3-ին՝ հետևյալ կայքէջից. [from www.edu.am](http://www.edu.am): <http://edu.am/index.php/am/about/view/107>
3. ՀՀ ԱՍՀՆ, *Հաշմանդամների և տարեցների հիմնահարցեր - Օրենսդրություն*, ստացված 2018 թ. հունվարի 3-ին՝ հետևյալ կայքէջից. [www.mlsa.am](http://www.mlsa.am): [http://www.mlsa.am/?page\\_id=1264](http://www.mlsa.am/?page_id=1264)
4. Առողջապահության ազգային ինստիտուտ (2017), «*Առողջություն և առողջապահություն*» վիճակագրական տարեգիրք, 2017թ., ստացված 2018 թ. հունվարի 3-ին՝ հետևյալ կայքէջից. [www.hih.am](http://www.hih.am): <http://nih.am/arm/topic/215/>
5. NSS RA. (2016). 11. *Հաշվառված հաշմանդամներ և բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների գործունեություն*, ստացված 2018 թ. հունվարի 3-ին՝ հետևյալ կայքէջից. [www.armstat.am](http://www.armstat.am): [http://www.armstat.am/file/article/soc\\_2016\\_11.pdf](http://www.armstat.am/file/article/soc_2016_11.pdf)
6. ՀՀ ԱՎԾ (2016), 15, *Մանկատների գործունեություն*, ստացված 2018 թ. հունվարի 3-ին՝ հետևյալ կայքէջից. [www.armstat.am](http://www.armstat.am): [http://www.armstat.am/file/article/soc\\_2016\\_15.pdf](http://www.armstat.am/file/article/soc_2016_15.pdf)
7. ՀՀ ԱՎԾ (2016). 2. *Հանրակրթական հաստատությունների գործունեություն* ստացված 2018 թ. հունվարի 3-ին՝ հետևյալ կայքէջից. [www.armstat.am](http://www.armstat.am): [http://www.armstat.am/file/article/soc\\_2016\\_2.pdf](http://www.armstat.am/file/article/soc_2016_2.pdf)
8. ՀՀ ԱՎԾ (2016). 9. *Առողջապահական համակարգ, հիվանդացություն և բուժսպասարկում*, ստացված 2018 թ. հունվարի 3-ին՝ հետևյալ կայքէջից. [www.armstat.am](http://www.armstat.am): [http://www.armstat.am/file/article/soc\\_2016\\_9.pdf](http://www.armstat.am/file/article/soc_2016_9.pdf)
9. Panorama.am. (2017, April 3). *Առողջապահության նախարարությունը՝ նորածնային սկրինինգների մասին*, ստացված 2018 թ. հունվարի 3-ին՝ հետևյալ կայքէջից. [www.panorama.am](http://www.panorama.am): <https://www.panorama.am/am/news/2017/04/03/%D5%B6%D5%B8%D6%80%D5%A1%D5%AE%D5%B6%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%BD%D5%AF%D6%80%D5%AB%D5%B6%D5%AB%D5%B6%D5%A3/1755420>
10. ՀՀ օրենք (նախագիծ), (2017), *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՆԱԽԱԴՊՐԱՆՑԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (Նոր խմբագրությամբ)*, ստացված 2018 թ. հունվարի 3-ին՝ հետևյալ կայքէջից. [www.e-draft.am](http://www.e-draft.am): <https://www.e-draft.am/projects/504/about>
11. ՀՀ օրենք (2014). «*ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ. ստացված 2018 թ. հունվարի 3-ին՝ հետևյալ կայքէջից. [www.arlis.am](http://www.arlis.am): <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=94683>

12. Save the Children Armenia Country Office. (2016, October 28). *Submission to the UN Special Rapporteur on the rights of persons with disabilities. regarding Questionnaires on the “provision of support to children[1] with disabilities”*. ստացված 2018 թ. հունվարի 3-ին՝ հետևյալ կայքէջից. [www.ohchr.org:  
http://www.ohchr.org/Documents/Issues/Disability/ProvisionSupport/NGOs/Save%20the%20Children%20Armenia.doc](http://www.ohchr.org/Documents/Issues/Disability/ProvisionSupport/NGOs/Save%20the%20Children%20Armenia.doc)
13. UNICEF. (2013). *The State of the World’s Children 2013 - Children with Disabilities*. ստացված 2018 թ. հունվարի 3-ին՝ հետևյալ կայքէջից. [www.unicef.org:  
https://www.unicef.org/sowc2013/](http://www.unicef.org/sowc2013/)
14. UNICEF, & Page, H. (n.d.). *Children with special needs: Transition to inclusive education in Armenia*. ստացված 2018 թ. հունվարի 3-ին՝ հետևյալ կայքէջից. <http://www.dietarunachal.org/ResourceMeterials/Children%20with%20Special%20Needs%20.pdf>